ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Զարգացումը
Կարգավորումը
Վերահսկողությունը

2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2014

Զարգացումը
Կարգավորումը
Վերահսկողությունը

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 2014 թվականին 4

Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և սպառողների շահերի պաշտպանությունը 2014 թվականին 14

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 2014 թվականին 19

ՀՀ ֆինանսական համակարգը 2014 թվականին 21

Բանկեր 22

Ընդհանուր դրույթներ 22

Բանկային համակարգի կապիտալը 24

Բանկային համակարգի պարտավորությունները 26

Բանկային համակարգի ակտիվները 29

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 33

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 36

Վարկային կազմակերպություններ 44

ՀՀ ապահովագրական շուկա 49

Արժեթղթերի շուկայի մասնակիցներ 57

Վճարահաշվարկային կազմակերպություններ 60

Վճարահաշվարկային համակարգ 63

Վերահսկողության զարգացման հեռանկարները 70

Հավելվածներ 74

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի ֆինանսական համակարգը 2014 թվականին եղել է բավականին ակտիվ՝ տնտեսության իրական հատվածի համար ապահովելով ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնում ու մատչելիության ավելացում: Տարվա ընթացքում ֆինանսական համակարգի ակտիվներն աճել են 15%-ով և կազմել համախառն ներքին արդյունքի 83.8%-ը (նախորդ տարվա համեմատ ավելացել են 6.7 տոկոսային կետով): Ֆինանսական միջնորդության խորացմանը զուգընթաց բանկերի միջև մրցակցության ավելացման պայմաններում պահպանվել են վարկերի տոկոսադրույքների նվազման և ավանդների տոկոսադրույքների ավելացման միտումները՝ հանգեցնելով տոկոսադրույքի սպրեդի նվազմանը:

Աշխարհաքաղաքական հիմնախնդիրների խորացման հետևանքով տարվա չորրորդ եռամսյակում տեղի է ունեցել ՀՀ տնտեսության հիմնարարներից բխող՝ դրամի կտրուկ արժեզրկում, որը նպաստել է ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի ավելացմանը: Ստեղծված իրավիճակում ֆինանսական համակարգը ցուցաբերել է ռիսկերի կլանման բարձր ունակություն՝ բավականաչափ արագ հարմարվելով նոր ձևավորվող տնտեսական իրավիճակին: Կենտրոնական բանկը շուկայական իրավիճակի փոփոխությանը արձագանքել է դրամավարկային քաղաքականության և վերահսկողական գործիքների կիրառման ճկուն համադրության ապահովմամբ՝ նպատակ ունենալով պահպանել գների և ֆինանսական համակարգի կայունությունը:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության ոլորտում Կենտրոնական բանկը շարունակել է իրականացնել ֆինանսական հաստատությունների գործունեության կարգավորման արդիականացման, ֆինանսական վերահսկողության արդյունավետության բարձրացման և սպառողների շահերի պաշտպանության ու հասարակության տարբեր նպատակային խմբերի ֆինանսական կրթման աշխատանքներ: 2014 թվականին Կենտրոնական բանկը նախաձեռնել է Բազել III ստանդարտի ներդրմանը առնչվող իրավական ակտերի փոփոխության նախագծեր և իրականացրել ֆինանսական հաստատությունների՝ ռիսկերի վրա հիմնված վերահսկողական համակարգի ներդրման աշխատանքներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների նորանոր զարգացումները ենթադրում են նաև կարգավորման դաշտի վերանայման անհրաժեշտություն: 2014 թվականին շարունակվել են ֆինանսական հատվածի կարգավորման դաշտի կատարելագործման աշխատանքները:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները

Օրենսդրական փոփոխություններ

2014 թվականին ընդունվել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը: Նշված օրենքի ընդունումը պայմանավորված է ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունը տրամադրելու դեպքերի հստակեցման անհրաժեշտությամբ: Փոփոխության համաձայն՝ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է տրամադրվել նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնին՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ լիազոր մարմնի հարցման հիման վրա՝ այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Նույն ժամանակահատվածում ընդունվել է նաև «Ներդրումային ֆոնդերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով հստակեցվել են ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող բաց ֆոնդի փայի հաշվարկային արժեքի հաշվարկման և հրապարակման պահանջները, ինչպես նաև Կառավարչի կողմից իր վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների կազմման և հրապարակման կարգը:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2014 թվականին ՀՀ կենտրոնական բանկը ընդունել, ինչպես նաև փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարել մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝

1. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում: Ըստ փոփոխությունների՝
   - Կապիտալի համարժեքության նորմատիվների հաշվարկում արտոնյալ բաժնետոմսերի և լրացուցիչ նորմատիվային կապիտալի մասնաբաժինները սահմանափակվել են: Մասնավորապես սահմանվել է, որ
     ա/ 2018 թվականի հունվարի 1-ից արտոնյալ բաժնետոմսերը բանկի հիմնական կապիտալի հաշվարկում կներառվեն հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության առավելագույնը 20 տոկոսի չափով,

բ/ հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում կընդգրկվի 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի 50 տոկոսի չափով, 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի 40 տոկոսի չափով, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի 30 տոկոսի չափով, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ առավելագույնը հիմնական կապիտալի 20 տոկոսի չափով:

- Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ) 2018 թվականի հունվարի 1-ից կկազմի 10 տոկոս:
- Հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում կապիտալից ոչ նյութական ակտիվները (բանկի գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրեր և դրանց օգտագործման իրավունքներ, Վիզա, ՄաստերՔարդ, Ամերիքան էքսպրես, Սվիֆտ, ՍիԲիէյՆեթ, ԱրՔա համակարգերից օգտվելու իրավունք տվող վճարումներ) աստիճանաբար կնվազեցվեն:
- Կապիտալի հաշվարկում երկարաժամկետ ստորադաս փոխառությունների նվազագույն պահանջները խստացվել են. գործող ստորադաս փոխառությունները աստիճանական կնվազեցվեն ընդհանուր կապիտալի հաշվարկից:
- Վերանայվել է պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկի հաշվետու և փաստացի ժամանակաշրջանների սահմանման սկզբունքը, մասնավորապես՝ սահմանվել է, որ փաստացի պահուստավորման ժամանակահատվածը սկսվում է հաշվետու ժամանակահատվածի ավարտից ավելի քան 1 ամիս անց, նախկինում գործող հաջորդ օրվա փոխարեն:
- Կանոնակարգ 2-ով սահմանված պահանջները բավարարող պարտատոմսերով ներգրավված միջոցներն ազատվել են պարտադիր պահուստավորումից:
- Վերանայվել է ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգը, մասնավորապես՝ սահմանվել է պահանջ, համաձայն որի՝ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը փաստացի պահուստավորման ժամանակահատվածի ընթացքում միջին օրական հաշվարկով իրականացնելու փոխարեն պետք է իրականացվի օրական կտրվածքով:
- Արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը 2014 թ. դեկտեմբերի 18-ից սահմանվել է 24%, այնուհետև՝ 2014 թ. դեկտեմբերի 24-ից նվազեցվել է և սահմանվել 20%:
- Վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների թողարկած պարտատոմսերի համար վարկային ռիսկի կշիռը համապատասխանեցվել է ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի ռիսկի կշիռներին, մասնավորապես՝ դրամի դեպքում սահմանվել է 0%, իսկ արտարժույթի դեպքում՝ 10%:
- Բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվել է.

  ա) մինչև 2017 թվականի հունվարի 1-ը՝ հինգ միլիարդ (5.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ,

բ) նոր ստեղծվող բանկերի համար՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը՝ երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ,

գ) 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո՝ բանկի և նոր ստեղծվող բանկերի համար՝ երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ:

Փոփոխությունների արդյունքում ակնկալվում է բանկային համակարգի կայունության ամրապնդում, ՀՀ բանկային համակարգում գործող բանկերի գործունեության, Կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետության բարձրացում:

2. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում: Մասնավորապես՝
   - Համապատասխան հաշվետվություններում նախատեսվել են դաշտեր, որտեղ պետք է արտացոլվեն մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի (Ն31), խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի (Ն32), բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի (Ն41) և բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի (Ն42) նորմատիվների այն խախտումները, որոնք տեղի են ունեցել պահանջի իրավունքի ծագման պահին, սակայն շտկվել են հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ:
   - Վերլուծական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունում ավելացվել է գործառնությունների դասակարգումն ըստ արդյունաբերական ճյուղերի:

3. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների լիցենզավորման, գրանցման, համաձայնության և/կամ թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերում, որոնց համաձայն՝
   - Ղեկավարների միջնորդագրերը Կենտրոնական բանկ են ներկայացվելու առցանց ռեժիմով տվյալները մուտքագրելու միջոցով:
   - Ֆինանսական կազմակերպությունների խորհրդի նախագահի գրանցման գործընթացը փոխարինվել է տեղեկացման գործընթացով:
   - Սահմանվել է, որ ղեկավարներին որակավորման վկայականները տրամադրվելու են էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով՝ թղթային եղանակով տրամադրելու փոխարեն:
   - Փոփոխվել են տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար սահմանված աշխատանքային փորձի պահանջները. սահմանվել է առնվազն 2 տարվա փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:
   - Նշանակալից մասնակիցների և օտարերկրյա ֆինանսական կազմակերպության նշանակալից մասնակիցների համար սահմանվել են ԿԲ ներկայացվող տեղեկատվության նոր ձևաչափեր:

- Սահմանվել է, որ գրանցման վկայականի կամ լիցենզիայի կորստի դեպքում կորստի վերաբերյալ թերթում տրվող հայտարարության փոխարեն հայտարարությունը տրվելու է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:
- Սահմանվել է, որ ֆինանսական կազմակերպությունների գլխամասերի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը:
- Ֆինանսական կազմակերպությունների կանոնադրության փոփոխության գրանցման գործընթացում կատարվել են փոփոխություններ, համաձայն որոնց՝ ԿԲ գրանցման է ներկայացվում ոչ թե ամբողջական կանոնադրությունը, այլ միայն փոփոխությունը, իսկ ամբողջական փոփոխված կանոնադրությունները ֆինանսական կազմակերպությունները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում:
- Բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ներդրումային ընկերությունների, վարկային կազմակերպությունների, կարգավորող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի գործադիր տնօրենը (վարչության նախագահը, անդամը), գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, գլխավոր հաշվապահը որակավորվում են Կենտրոնական բանկում, իսկ նշված կազմակերպությունների մյուս ղեկավարները՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշները բավարարող որակավորման ստուգում իրականացնող կազմակերպություններում, որոնք էլ տրամադրելու են համապատասխան որակավորման վկայականներ:
- Որակավորող կազմակերպություններում որակավորման ստուգում են անցնելու և որակավորման վկայական են ստանալու նաև ապահովագրական բրոքերի, փոխանակման կետերի, արտարժույթի դիլերների բոլոր ղեկավարները (աշխատակիցները):
- Ֆինանսական կազմակերպությունների մասնաճյուղերի ղեկավարների գրանցման ընթացակարգը ավելի է պարզեցվել, մասնավորապես՝ մասնաճյուղի ղեկավարը համարվելու է Կենտրոնական բանկում գրանցված՝ միջնորդագիրը Կենտրոնական բանկ մուտքագրելու պահից:

Փոփոխությունների արդյունքում ակնկալվում է ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման ստուգման գործառույթի իրականացում համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, գրանցման, համաձայնության տրամադրման, որակավորման ստուգման և համապատասխանության գնահատման գործընթացների բարելավում և միասնականացում:

4. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգը», համաձայն որի ներդրվել է բանկերից տվյալների ստացման այնպիսի համակարգ, ըստ որի՝ բանկերի կողմից տրամադրվելու են կիրառվող ողջ գործիքակազմի վերաբերյալ չմշակված տվյալներ, որոնք ՀՀ ԿԲ տարբեր ստորաբաժանումները մշակելու են ըստ անհրաժեշտության:

Կարգի ընդունմամբ ակնկալվում է բանկերից ստացվող տեղեկատվության որակի բարելավում, տվյալների օգտագործման ճկունության բարձրացում, առկա հաշվետվական ձևերի և բանկերին տվյալների ընթացիկ հարցումների պակասեցում:

5. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգում», մասնավորապես՝ ավելացել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայության հետ գրավատան պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգի միացման պահանջ:

Ապահովագրական համակարգի գործունեության կարգավորման դաշտում 2014 թվականին կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ են կատարվել ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» որոշման մեջ, որոնց համաձայն՝ ուժը կորցրած են ճանաչվել ԱՊՊԱ կտրոնին վերաբերող դրույթները:
2. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացում են կատարվել «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում: Վերոնշյալ որոշմամբ Ն4 նորմատիվի տեխնիկական պահուստների համարժեք ակտիվների ցանկում ներառվել են նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված այն արժեթղթերը, որոնք կարգավորվող շուկայում թույլատրված են առևտրին և ունեն շուկա ստեղծող:
3. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգն ու ժամկետները» կանոնակարգ 3/04-ում: Ապահովագրական ընկերությունների համար սահմանվել են նոր հաշվետվական ձևեր՝ պատասխանատու ակտուարի կողից կատարված հաշվարկների, մասնագիտական կարծիքի, գնահատականների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սեփական ռիսկերի և վճարունակության գնահատման արդյունքների և ապահովագրության ոլորտում կատարված խարդախությունների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական բանկ ներկայացնելու համար: Կանոնակարգը նաև համապատասխանեցվել է ապահովագրական ընկերությունների նորմատիվային դաշտում կատարված փոփոխությանը:
4. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևերը, տեղեկատվության կազմը, ներկայացման կարգը և ժամկետները» հաստատելու մասին 26.06.2007 թվականի թիվ 197-Ն որոշման մեջ: Ապահովագրական բրոքերների կողմից ներկայացվող հաշվետվությունների կարգում այլ իրավական ակտին կատարած հղման փոխարեն սահմանվել են նոր հաշվետվությունների ձևեր, որոնք պետք է լրացվեն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

5. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Ապահովագրական պորտֆելի փոխանցման նախնական թույլտվություն տրամադրելու կարգում»: Կարգում սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ապահովագրական պորտֆելը ստանձնող ապահովագրական ընկերությունը պարտավորվում է ստանձնել պորտֆելը փոխանցող ապահովագրական ընկերության ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային համակարգը (դրանց հետ կապված փաստաթղթերը) և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի հետագա վարումը, իսկ ապահովագրական պորտֆելը փոխանցող ապահովագրական ընկերությունն էլ պարտավորվում է պորտֆելը ստանձնող ընկերությանը փոխանցել ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային համակարգը (դրանց հետ կապված փաստաթղթերը):

6. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ում: Կանոնակարգում սահմանվել է, որ միացող ապահովագրական ընկերությունը պարտավոր է միացման արդյունքում պահպանվող ապահովագրական ընկերությանը փոխանցել նախկինում կնքած ԱՊՊԱ պայմանագրերի գծով ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային համակարգը (դրանց հետ կապված փաստաթղթերը), իսկ պահպանվող ապահովագրական ընկերությունը պարտավոր է ստանձնել միացող ապահովագրական ընկերության ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային համակարգը (դրանց հետ կապված փաստաթղթերը) և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի հետագա վարումը:

7. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություն և լրացում է կատարվել «Ապահովագրական ընկերության ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունների ցանկը, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 3/13-ում: Ապահովագրական ընկերությունների կողմից ինքնալուծարման նախնական թույլտվություն ստանալու համար փաստաթղթերի ցանկում նախկինում ԱՊՊԱ պայմանագիր կնքած, սակայն ԱՊՊԱ պայմանագրերի գծով իր ապահովագրական պորտֆելն այլ ապահովագրական ընկերության չփոխանցած ապահովագրական ընկերությունների համար ավելացել է պարտավորագիր՝ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ մուտքագրված տեղեկատվության վարումը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային համակարգը և դրանց հետ կապված բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը փոխանցելու վերաբերյալ:

8. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ լրացումներ են կատարվել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ստեղծելու, տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը»-ում: Սահմանվել է, որ ընկերությունները պարտավոր են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տեղեկատվություն ներկայացնել, ինչպես նաև փոփոխել արդեն իսկ ներկայացված տեղեկատվությունը ապահովագրական պորտֆելի փոխանցման և ապահովագրական ընկերությունների միացման դեպքերում ստանձնած ապահովագրության պայմանագրերի գծով: Ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում Բյուրոն պետք է փոփոխություն կատարի ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում:

9. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություն է կատարվել «Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի որոշման մեջ: Երաշխավորման ֆոնդին կատարվող պարբերական վճարումները դադարեցվել են 1 տարի ժամկետով:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով 2014 թվականին ընդունվել և փոփոխություններ ու լրացումներ են կատարվել հետևյալ իրավական ակտերում.

1. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի կազմն ու առավելագույն չափը» կանոնակարգ 10/12-ում: Դրանց համաձայն՝ ֆոնդի տարեկան արտաքին աուդիտի վճարը կարող է կատարվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի հաշվին, որի դեպքում աուդիտի ընդհանուր ծախսը ֆոնդերի միջև բաշխվում է համամասնորեն՝ ըստ այդ ֆոնդերի ակտիվների մեծության: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հաշվին տարեկան արտաքին աուդիտի գծով կատարվող ծախսի համար սահմանված է առավելագույն չափ՝ կախված ֆոնդերի ակտիվների ծավալից:
2. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատվել է «Մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու համար ներկայացվող դիմումի ձևը և ներկայացման կարգը հաստատելու մասին» որոշումը: Իրավական ակտով սահմանվում է ընթացակարգ, որով մասնակիցը սույն թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 25-ը կարող է դիմում ներկայացնել մասնակիցների ռեեստրը վարողին՝ իր կողմից կատարված կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու նպատակով:
3. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատվել է «Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/30-ը: Իրավական ակտով սահմանվել են նախկինում ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների արժութային և քանակական սահմանափակումները՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքի մոտեցումներին համահունչ:
4. ՀՀ ԿԲ խորհրդի որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի) ոլորտը կարգավորող 27 իրավական ակտերում: Փոփոխությունների և լրացումների նպատակն է նշված իրավական ակտերը համապատասխանեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններին և կուտակային կենսաթոշակային համակարգի գործողության նոր մեխանիզմներին:
5. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Կանոնակարգ 5/08-ում, որոնց նպատակն է հստակեցնել որոշ դրույթներ՝ հաշվի առնելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի տեղեկատվական համակարգից (AMPIS) ներկայացվող տվյալների առանձնահատկությունները: Դրանով կամբողջականացվեն կուտակային բաղադրիչի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հավաքագրվող տեղեկատվությունը և կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ կատարվող վերլուծությունների արդյունքները:

6. ՀՀ ԿԲ խորհրդի որոշումներով հաստատվել են «Բաց կամ միջակայքային ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/26-ը և «Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման և թողարկման կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/27-ը: Սահմանվել են ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման, թողարկման) կասեցման այնպիսի հիմքեր, որոնք հնարավորինս կզսպեն ֆոնդի կառավարիչների կողմից ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման, թողարկման) մասնակիցների շահերից չբխող կասեցումների իրականացումը:

Վճարահաշվարկային համակարգի կարգավորման դաշտում 2014 թ. կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. ՀՀ ԿԲ խորհրդի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի՝ առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության մասին» որոշումը, որով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող այն առևտրային բանկերը, որոնք մասնակցում են իրենց հետ փոխկապակցված Արագ փոխանցումների մեկ համակարգին կամ փոխկապակցված են այդպիսի Արագ փոխանցման համակարգի օպերատորի հետ, ապահովում են առնվազն երկու այլ Արագ փոխանցումների համակարգերում մասնակցությունը:

2. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվության տրամադրումը կարգը» և հաստատվել է «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը»: Որոշման նպատակն է պարզեցնել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվության տրամադրման գործընթացը և հստակեցնել Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվությունը, մասնավորապես.
   - Սահմանվել է Համակարգին մասնակցելու թույլտվության տրամադրման պարզեցված ընթացակարգ այն դեպքում, երբ տվյալ համակարգը մեկ անգամ արդեն գնահատվել է ԿԲ կողմից և ներառված է ԿԲ կայքում տեղադրվող Գնահատված ցանկում:
   - «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել են Համակարգին մասնակցելու թույլտվություն ստանալու ժամանակ անհրաժեշտ նոր փաստաթղթերին ներկայացվող պահանջները, մասնավորապես.
     1. դիմորդի իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը,
     2. դիմորդի և Համակարգի օպերատորի միջև կնքվող պայմանագիրը կամ պայմանագրի նախագիծը ներկայացնելու պահանջը,

3. Համակարգի նկարագրության և գործունեության վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության տեղեկանքի ձևը,
4. Համակարգին մասնակցելու հնարավոր ռիսկերի գնահատումը պարունակող տեղեկանքի ձևը,
5. Համակարգի օպերատորի և վերջինիս սեփականատերերի վերաբերյալ տեղեկանքի ձևը,
6. փոփոխությունների ցանկը, որոնց վերաբերյալ Հայաստանի մասնակիցը պարտավոր է տեղեկացնել Կենտրոնական բանկին:

3. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը», որի համաձայն՝
   1) Հստակեցվել են ՀՀ տարածքում թողարկվող վճարային քարտերի տեսակները և օգտագործման հնարավորությունները, մասնավորապես՝
      ա. սահմանվել է առանց «անուն, ազգանուն» դաշտի առկայության վճարային քարտի տեսակ՝ պայմանով, որ.
         - ✓ թողարկվել է ոչ ավելի, քան երկու տարի գործողության ժամկետով՝ միայն ՀՀ դրամով,
         - ✓ կարող է օգտագործվել բացառապես PIN-կոդի կիրառմամբ,
         - ✓ ենթակա չէ նույն անձի անունով վերաթողարկման,
         - ✓ ենթակա չէ օգտագործման ինտերնետ միջավայրում,
      բ. կատարվել են փոփոխություններ վճարային քարտերի դասակարգման մեջ, մասնավորապես՝ սահմանվել են քարտերի հետևյալ տեսակները՝ դեբետային, հաշվարկային և վարկային:
   2) Հստակեցվել և լրամշակվել է վճարային քարտով նախորդ ամսվա ընթացքում կատարված գործառնությունների վերաբերյալ քարտապանին տրամադրվող հաշվետվության (քաղվածքի) ձևը:

4. Փոփոխություններ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում, որոնց նպատակն է եղել հստակեցնել վճարային քարտերի թողարկման, սպասարկման և տարածման կարգը սահմանող իրավական ակտում կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության ձևը: Մասնավորապես՝ սահմանվել են հաշվետու բանկի կողմից թողարկված վճարային քարտերի տեսակների, վճարային քարտ սպասարկող սարքավորումների տեղադրման վայրի, ինչպես նաև հայաստանյան և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված և ՀՀ տարածքում և արտասահմանում վճարային քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվության տրամադրման նոր կանոններ:

5. ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն ու ՀՀ ֆինանսների նախարարությունը համատեղ ընդունել են «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար հաշիվների բացման, ինչպես նաև փակման դեպքերում հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման վերաբերյալ կարգը», որով սահմանվել են հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար բանկերում բանկային հաշիվ բացելիս (փակելիս) հաշվի բացման (փակման) մասին հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման ընթացակարգը, ինչպես նաև հաշվի բացման (փակման) մասին

հարկային մարմնին տրամադրվող տեղեկատվության պարտադիր վավերապայմանները: Որոշման նպատակը ՀՀ գործարար միջավայրի բարելավումն է՝ հարկ վճարողների բանկային հաշիվների բացման մասին հարկային մարմնին տեղեկացման ժամանակի կրճատման միջոցով:

Սպառողների շահերի պաշտպանության և գործարար վարվելակերպի ոլորտի կարգավորման դաշտում 2014 թվականին լրամշակվել և փոփոխվել են հետևյալ իրավական ակտերը.

1. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ***«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական depozիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում:*** Դրանց նպատակն է բարելավել թափանցիկության պահանջները և սպառողների համար սահմանել ֆինանսական ծառայությունների համեմատման արդյունավետ միջոցներ: Ֆինանսական կազմակերպությունների համար սահմանվել են սպառողական վարկերի համար ընդհանրական թերթիկներ ունենալու պահանջներ, ընդ որում՝ նոր ընդհանրական թերթիկը փոխարինելու է գործող տեղեկատվական ամփոփագրին և ստանդարտ ձևաչափով սպառողին ներկայացնելու է սպառողական վարկի ընդհանուր էական պայմանները:

2. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ***«Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ում,*** համաձայն որոնց՝ ֆինանսական կազմակերպությունները սպառողական վարկերի համար, մինչև պայմանագրի կնքումը, սպառողներին տրամադրելու են անհատական թերթիկներ, որոնք ներառելու են սպառողական վարկի այն էական պայմանները, որոնց հիման վրա կնքվելու է վարկային պայմանագիրը: Փոփոխությունների և լրացումների նպատակն է մինչև պայմանագրի կնքումը սպառողներին ծանոթացնել սպառողական վարկերի էական պայմաններին՝ հնարավորություն ընձեռելով համեմատել դրանք միևնույն տեսակի ծառայության պայմանների հետ և մատչելի ձևով վերջիններիս ծանոթացնել այն էական պայմաններին, որոնք արտացոլվելու են պայմանագրում:

3. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ***«Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին մասնակցին տրամադրվող տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ում և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական depozիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում,*** որոնք հիմնականում պայմանավորված էին 2014 թվականի հունիսի 21-ին ընդունված ««Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Օրենսդրական դաշտին ֆինանսական հաստատությունների գործունեության համապատասխանության, ռիսկերի բացահայտման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանության և այլ նպատակներով Կենտրոնական բանկը իրականացնում է «փաստաթղթային» և «տեղերում» ստուգումներ:

Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական հաստատություններում իրականացված փաստաթղթային և տեղերում ստուգումների հիմնական ուղղվածություններն են.

- ակտիվների որակի գնահատումը,
- ներքին հսկողության համակարգը,
- օրենսդրությանը գործունեության համապատասխանությունը,
- ռիսկերի կառավարման համակարգը,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովումը,
- գործունեության անվտանգության և հուսալիության պահանջների ապահովումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը,
- թափանցիկության ապահովումը,
- կանոնակարգման դաշտի փոփոխություններին ընկերությունների գործունեության համապատասխանեցումը,
- վերաապահովագրության ռիսկայնության մակարդակը,
- ազդագրի և/կամ առևտրի ազդագրի գրանցման գործընթացների կազմակերպումն ու վերահսկումը,
- հաշվետու թողարկողների կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության թափանցիկության, լիարժեքության և արժանահավատության ապահովման նկատմամբ վերահսկողությունը,
- արժեթղթերի հրապարակային առաջարկությամբ հանդես եկող անձանց գործողությունների՝ օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ վերահսկողությունը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
- սպառողների շահերի պաշտպանությունը,
- ծառայությունների մատուցման որակի գնահատումը:

Վերահսկողություն

2014 թվականին Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից իրականացվել են ինչպես «փաստաթղթային» այնպես էլ 369 «տեղերում» ստուգումներ:

Աղյուսակ 1. Տեղերում ստուգումները և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

Ցուցանիշներ	2011 թվական	2012 թվական	2013 թվական	2014 թվական
Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	84	84	86	86
Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների և գրավատների ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	2.047 տրլն դրամ	2.457 տրլն դրամ	2.985 տրլն դրամ	3.790 տրլն դրամ
Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	24.4 մլրդ դրամ	25.3 մլրդ դրամ	34.7 մլրդ դրամ	44.1 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	235	241	211	369
բանկերում՝ բոլոր ուղղություններով	7	5	5	4
բանկերում՝ նպատակային	13	8	37	36
վարկային կազմակերպություններում՝ բոլոր ուղղություններով	6	5	7	5
վարկային կազմակերպություններում՝ նպատակային	1	1	-	-
ապահովագրական ընկերություններում՝ բոլոր ուղղություններով	3	3	2	2
ապահովագրական ընկերություններում՝ նպատակային	-	12	11	19
ապահովագրական բրոքերային ընկերություններ	-	-	2	-
ապահովագրական գործակալներ	38	-	-	-
ներդրումային ընկերություններ	4	2	4	4
Ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն)	163	205	143	299

Տարվա ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումներում, նախորդ տարվա համեմատ, ավելացել է բանկերի խախտումների քանակը: Նախորդ տարվա համեմատ ավելացել է նաև կիրառված պատժամիջոցների քանակը:

Աղյուսակ 2. Ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումների համար կիրառված պատժամիջոցները 2014 թվականին

Ցուցանիշներ	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Գրավատներ	Վճարահաշվարկային կազմակերպություններ*
Պատժամիջոցներ					
Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում	-	-	-	3	-
Տուգանք կազմակերպությանը	299	107	128	95	13
Տուգանք ղեկավարին	-	-	-	-	-
Տույժ	3	-	-	-	-
Նախազգուշացում	230	58	60	25	5
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	-	-	-	-	-
Լիցենզիայի գործունեության ժամանակավոր կասեցում	-	-	-	5	-
Կարճում	1	-	-	-	-

** Վճարային գործիքներ կիրառող և դրամական փոխանցում, վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ:*

Սպառողների շահերի պաշտպանություն

- Շարունակական են եղել ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական իրազեկման նպատակով իրականացվող միջոցառումները, որոնք ուղղված էին ինչպես գործարար վարվելակերպի կարգավորմանն ու վերահսկողությանը, այնպես էլ հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանը: Կատարելագործվել և մշակվել են ***գործարար վարվելակերպի վերահսկողության*** գործընթացները կարգավորող ձեռնարկներ, մասնավորապես լրամշակվել է «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի տեղերում ստուգման ձեռնարկը»:
- Մշակվել է «Ստուգիչ գործարքների իրականացման ձեռնարկը», որի նպատակն է ստուգիչ գործարքների իրականացման համար սահմանել հստակ ընթացակարգեր և գործընթացներ, որոնք Կենտրոնական բանկին հնարավորություն կտան ուսումնասիրելու շուկան, բացահայտելու գործարար սովորույթները, ինչպես նաև ստուգելու ֆինանսական կազմակերպության հաճախորդների սպասարկման գործընթացի համապատասխանությունը օրենսդրական պահանջներին և անհրաժեշտության դեպքում կիրառելու համապատասխան վերահսկողական միջոցառումներ:
- Մշակվել է «Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի թեժ գծի վարման, թեժ գծի միջոցով ստացված զանգերի արձագանքման աշխատակարգը»: Սահմանվել են այնպիսի կանոններ, սկզբունքներ և գործընթացներ, որոնց կիրառումը կհանգեցնի թեժ գծի միջոցով իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ստացված տեղեկատվության ուսումնասիր-

ման և համապատասխան գործողությունների իրականացման օպերատիվության ավելացմանը, թեժ գծին զանգահարող սպառողների շահերի, իրավունքների օբյեկտիվ պաշտպանությանը:

Շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի՝ տեղերում և հեռակա ստուգումները:

- մատուցվող ծառայություններ,
- հաճախորդների սպասարկում,
- բողոքների և վեճերի լուծման գործընթաց,
- գովազդ և հրապարակվող այլ տեղեկություններ:

Տեղերում ստուգումների շրջանակներում ստուգվել են նաև վերոնշյալ ուղղություններով ֆինանսական կազմակերպություններում ներքին հսկողության պատշաճ գործընթացների առկայությունն ու կիրարկումը:

Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի հեռակա ստուգումների շրջանակներում ստուգվել են՝

- կազմակերպությունների հեռուստագովազդները,
- կազմակերպությունների ինտերնետային կայքերում հրապարակվող տեղեկատվությունը,
- հրապարակվող տեղեկատվության մի շարք տեսակներ (ռադիոգովազդներ, արտաքին գովազդային վահանակներ, տեղեկատվական ամփոփագրեր և այլն)՝ ըստ անհրաժեշտության:

Իրականացվել են սպառողներից գրավոր եղանակով և թեժ գծի միջոցով ստացված բողոքների ուսումնասիրության և արծագանքման աշխատանքներ: 2014 թվականին թեժ գծի միջոցով ստացվել են մոտ 1000 հարցումներ և բողոքներ:

Ֆինանսական իրազեկման բարձրացման նպատակով կատարվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ՀՀ Կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը» և դրա 2014-2019 թվականների գործողությունների ծրագիրը, որը ֆինանսական կրթումը դիտարկում է որպես համընդհանուր, պետական ծրագիր: Այն կարևոր հիմնաքար է ՀՀ-ում ֆինանսական կրթվածության բարձրացման ուղղությամբ «մասնավոր-պետություն-հասարակություն» ջանքերի համախմբման և ապագայում արդյունավետ քայլերի իրականացման համար: Զուգահեռաբար շարունակվել են հանրության շրջանում անձնական ֆինանսների կարևորման և դրանց իրազեկմանը նպատակաուղղված միջոցառումները: 2014 թվականի հոկտեմբերին ևս իրականացվել է «Իմ ֆինանսների միամսյակ» ծրագիրը, որի շրջանակում ֆինանսական կառույցների, միջազգային դոնորների, ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերով կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ֆինանսական շրջագայություններ, ֆինանսական թեմաներով մրցույթներ, միջհամալսարանական «Ինչ, որտեղ, երբ» առաջնություն և բանավեճերի մրցաշար, «Իմ երազանքների ծառ» միջոցառումը, սեմինարներ մի շարք համալսարաններում և դպրոցներում, բացօթյա ցուցահանդեսներ Երևանում և ՀՀ բոլոր մարզերում և այլն: Միաժամանակ շարունակվել են «Ֆինանսներ բոլորի համար» ինտերնետային կայքի (www.abcfinance.am) կատարելագործման, կենսաթոշակային համակարգի բարեփոխումների լուսաբանման աշխատանքները, «Պատանեկան նվաճումներ», «ԱՅՍԵԿ Հայաստան» և «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» հասարակական կազմակերպությունների հետ հա-

մագործակցությունը դպրոցականների և ուսանողների ֆինանսական կրթման համատեղ միջոցառումների իրականացման գործընթացում: Շարունակական են եղել նաև գրավոր և թեժ գծի միջոցով սպառողներից ստացված բողոքներին արձագանքելու աշխատանքները: Հանրությանը ԱՊՊԱ կեղծ վկայագրերի կնքումից զերծ պահելու նպատակով լուսաբանման նոր աշխատանքներ են իրականացվել: Առանձին թիրախային խմբերի համար, ինչպիսիք են զինվորականները, գյուղական համայնքների բնակիչները, իրականացվել են անձնական ֆինանսների կառավարմանը առնչվող սեմինարներ:

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Միջազգային նորանոր զարգացումները պահանջում են գիտելիքների կատարելագործում, օտարերկրյա փորձի ընկալում ու ներդրում: Կենտրոնական բանկը 2014 թվականին շարունակել է անձնակազմի որակավորման բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան աշխատակիցները հաշվետու տարվա ընթացքում մասնակցել են մի շարք ներքին և արտաքին դասընթացների, աշխատանքային այցերի և կոնֆերանսների: Վերապատրաստված աշխատակիցները ներկայացրել են հաշվետվություն, մշակված հարցաթերթերի միջոցով գնահատել դասընթացների արդյունավետությունը, հանդես եկել կիրառելի փորձի ներդրման առաջարկություններով և շահագրգիռ ստորաբաժանումների աշխատակիցներին փոխանցել վերապատրաստման արդյունքում ստացած գիտելիքները:

2014 թվականին շարունակվել է համագործակցությունը Արժույթի միջազգային հիմնադրամի, Ֆինանսական կայունության ինստիտուտի, Վիեննայի միացյալ ինստիտուտի, Միջազգային հաշվարկների բանկի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Լեհաստանի, Չեխիայի և Ավստրիայի ազգային ու կենտրոնական բանկերի, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսումնական կենտրոնի, Լյուքսեմբուրգի դքսության ֆինանսական տեխնոլոգիաների փոխանցման գործակալության, Եվրասիական տնտեսական համագործակցության երկրների, Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության և այլ կառույցների հետ: Վերոնշյալ կառույցների կողմից կազմակերպված դասընթացների, կոնֆերանսների և աշխատանքային փորձի փոխանակման, վերապատրաստման թեմաները հիմնականում վերաբերել են ֆինանսական կայունության, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների վերահսկողության և կարգավորման արդի խնդիրներին: ԿԲ մի շարք մասնագետներ իրական ժամանակի ռեժիմով մասնակցել են Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողության ուսուցողական դասընթացներին: Հաշվետու ժամանակաշրջանում ԿԲ աշխատակիցները շարունակել են մասնակցել նաև ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում միջազգային մասնագիտական որակավորման քննություններին:

2014 թվականին պահպանվել և զարգացվել է Կենտրոնական բանկի բարձր որակավորում ունեցող աշխատակիցների կողմից երիտասարդ մասնագետների համար դասընթացներ կազմակերպելու մշակույթը, որի նպատակն է գիտելիքի ու փորձի, մասնագիտական գործունեության համար կարևոր հմտությունների փոխանցումը: Աշխատակիցների մասնագիտական զարգացումն ապահովելու նպատակով կատարվել են աշխատանքի շրջափոխումներ (ռոտացիա), որոնք էապես նպաստում են փորձառու մասնագետների գիտելիքների ընդլայնմանը:

Կենտրոնական բանկն ակտիվ համագործակցել է ԲՈՒՀ-երի հետ. մասնակցել է ուսանողների հետ հանդիպումներին, անցկացրել գիտահետազոտական ու աշխատանքային պրակտիկաներ:

Կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում Կենտրոնական բանկն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) պատվիրակությանը և Համաշխարհային բանկի (ՀԲ) կենսաթոշակային բարեփոխումների ոլորտում տեխնիկական օժանդակության առաքելությանը: Գործնական կապերը ընդլայնելու, երկրի մակրոտնտեսական վիճակին ծանոթանալու և բանակցություններ վարելու նպատակով 2014 թվականին Կենտրոնական բանկ են այցելել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB), Սևծովյան առևտրի և զարգացման բանկի (BSTDB) պատվիրակությունները:


Կենտրոնական բանկի կողմից կազմակերպվել են մի շարք գործնական հանդիպումներ, նիստեր, «կլոր սեղաններ» և համաժողովներ: 2014 թվականին կայացել է ԱՊՀ երկրների ապահովագրական վերահսկողության մարմինների ղեկավարների Միջպետական համակարգող խորհրդի նիստը, Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի (European Fund for South Eastern Europe) տարեկան համաժողովը, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկային վերահսկողների (BSCEE-Banking Supervisors from Central and Eastern Europe) խմբի տարեկան համաժողովը, Ֆինանսական կայունության ինստիտուտի (Financial Stability Institute), Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (International Association of Insurance Supervisors) և ՀՀ կենտրոնական բանկի կողմից համատեղ կազմակերպված տարածաշրջանային սեմինարը:

Տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները երկկողմ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված օտարերկրյա կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու ուղղությամբ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Գրաֆիկ 1.

Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը ըստ ֆինանսական հաստատությունների



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

2014 թվականին ՀՀ ֆինանսական համակարգը եղել է բավականին ակտիվ՝ ապահովելով անվանական ՀՆԱ-ի նկատմամբ հիմնական հաշվեկշռային ցուցանիշների մասով առաջանցիկ աճի տեմպեր: Տարվա ընթացքում ֆինանսական համակարգի վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը աճել է 6.3 տոկոսային կետով և կազմել 49.1%, իսկ ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը աճել է 6.7 տոկոսային կետով և կազմել 83.8%:

Ֆինանսական համակարգի խոշոր մասնակիցը շարունակում է մնալ բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 90%-ը: Հաշվետու տարում ևս բանկային համակարգին հաջողվել է ապահովել հիմնական հաշվեկշռային ցուցանիշների զգալի աճ, իսկ մրցակցության հետագա խորացման արդյունքում արձանագրվել է նաև տոկոսադրույքների սպրեդի նվազում:

ԲԱՆԿԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

31.12.2014 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր և մեկ զարգացման բանկ («Համահայկական բանկ» ԲԲԸ): Հաշվետու տարում անվանական ՀՆԱ-ի նկատմամբ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշների առաջանցիկ աճի պայմաններում արձանագրվել է ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշների զգալի աճ: Բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշները աճել են համապատասխանաբար 6.4 և 5.7 տոկոսային կետով և կազմել 75.4% և 45.8%: Ավանդների և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել 35.5%:

2014 թ. արձանագրվել է ֆինանսական ծառայությունների հասանելիությունը բնութագրող ցուցանիշների զգալի աճ: Բանկային մասնաճյուղերի քանակն ավելացել է 24-ով և տարեվերջին կազմել 509: Արդյունքում, 100000 չափահաս բնակչի հաշվով, մասնաճյուղերի քանակն ավելացել է 3.0 տոկոսային կետով և կազմել 22.8:


Աղյուսակ 3. Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը

	2012	2013	2014
100000 չափահաս բնակչի հաշվով մասնաճյուղերի քանակ	18.9	19.8	22.8
100000 չափահաս բնակչի հաշվով ԱԳՄ-ների քանակ	44.8	51.1	62.1

Բանկային համակարգի աշխատակիցների քանակը (ներառյալ՝ սպասարկող անձնակազմը) ավելացել է 2.9%-ով և տարեվերջին կազմել 11792: Ընդհանուր թվաքանակում ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.5 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 16.6%:

Գրաֆիկ 2.


Բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 3.


Բանկերի մասնաճյուղերի և աշխատակիցների քանակը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 4.

Բանկերի ակտիվների կումուլյատիվ բաշխվածությունը՝ ըստ ակտիվների մեծության[1]



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

2014 թվականին արձանագրվել է Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակցի աճ գրեթե բոլոր հիմնական հաշվեկշռային ցուցանիշների մասով՝ բացառությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների: Այդուհանդերձ, կենտրոնացվածության գործակիցները պահպանվել են 0.06-ից 0.1–ի միջակայքում՝ փաստելով բանկային համակարգի նվազ կենտրոնացվածության մասին:

Աղյուսակ 4. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.12	31.12.13	31.12.14
Ընդհանուր ակտիվներ	0.0683	0.0699	0.0727
Ընդհանուր պարտավորություններ	0.0705	0.0727	0.0751
Ընդհանուր կապիտալ	0.0618	0.614	0.0627
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.0740	0.0724	0.0754
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.0745	0.0760	0.750
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.0967	0.1169	0.0926

Խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը ևս աճել է գրեթե բոլոր հիմնական հաշվեկշռային ցուցանիշների մասով՝ բացառությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների: Բևեռացվածության փոքր աճի մասին է փաստում նաև ըստ ակտիվների Ջինիի կենտրոնացվածության գործակցի աճը. նախորդ տարվա համեմատ այս գործակիցն աճել է 1.0 տոկոսային կետով և կազմել 37.0%:

[1] *Ըստ ակտիվների մեծության բանկերի ակտիվների կուտակային կումուլյատիվ բաշխվածության (Լորենցի) կորը կիրառվել է Ջինիի կենտրոնացվածության ինդեքսի հաշվարկման համար՝ որպես 45^0 անկյամբ տարված և Լորենցի կորերով պարփակված բազմանկյունների մակերեսների տարբերություն:*

Աղյուսակ 5. Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը

Ցուցանիշներ	31.12.12	31.12.13	31.12.14
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	39%	39%	43%
ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	75%	77%	77%
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	40%	40%	43%
ԿԳ 10	77%	79%	78%
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	37%	37%	37%
ԿԳ 10	68%	69%	71%
Տնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ 4	42%	42%	44%
ԿԳ 10	78%	78%	78%
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ 4	42%	44%	43%
ԿԳ 10	79%	80%	79%
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ընթացիկ ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)			
ԿԳ 4	52%	59%	52%
ԿԳ 10	83%	86%	83%


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ

Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 2.9%-ով (13.1 մլրդ դրամով) և կազմել 469.1 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է հաշվետու տարվա 21.2 մլրդ դրամ զուտ շահույթով: Տարվա ընթացքում 8 բանկ համալրել են կանոնադրական կապիտալը ընդհանուր 27.1 մլրդ դրամի չափով, որից 10.1 մլրդ դրամը համալրվել է արտաքին աղբյուրների հաշվին:

Գրաֆիկ 5.

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տարվա ընթացքում ոչ ռեզիդենտ մասնակիցների փայամասնակցության տեսակարար կշիռը բանկային համակարգի կանոնադրական կապիտալում նվազել է 8.1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել է 66.5%՝ հիմնականում պայմանավորված 1 բանկի բաժնետիրոջ տնտեսական գործունեության շահերի կենտրոնի փոփոխության հետևանքով ռեզիդենտության կարգավիճակի փոփոխությամբ:

Հաշվետու տարում պահպանվել են ընդհանուր կապիտալի նկատմամբ ընդհանուր ակտիվների առաջանցիկ աճի տեմպերը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 1.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 13.8%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը


2014 թվականին բանկային համակարգի վարկային պորտֆելի բարձր աճի տեմպի և վերադարձելիության նվազման պայմաններում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը տարեսկզբի համեմատ նվազել է 2.2 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 14.5% (պահանջվող նվազագույն սահմանաչափը՝ 12%): Ըստ առանձին առևտրային բանկերի՝ ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նույնպես բարձր է եղել սահմանված նվազագույն սահմանաչափից, և տարվա ընթացքում որևէ բանկում կապիտալի համարժեքության նորմատիվի խախտում չի արձանագրվել:

Առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալն աճել է 5.6%-ով (23.9 մլրդ դրամով) և կազմել 452.4 մլրդ դրամ: Ընդհանուր նորմատիվային կապիտալում հիմնական նորմատիվային կապիտալի տեսակարար կշիռը աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել 87.5%:

Ըստ ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքի՝ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 89.9%, 7.2% և 2.9% (31.12.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 91.1%, 5.9% և 3.0%): Այս համատեքստում ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության տեսանկյունից վարկային ռիսկը շարունակում է դիտարկվել որպես կարևորագույն ռիսկ:

Գրաֆիկ 6.

Առևտրային բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը և կապիտալի համարժեքության դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկերի սեփականատերերը


Ըստ կազմակերպաիրավական տեսակների՝ ՀՀ տարածքում գործող 22 բանկերից 1-ը սահմանափակ պատասխանատվությամբ, 4-ը՝ բաց բաժնետիրական, 17-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ են:

Բանկային համակարգի մասնակիցներ են (բաժնետերեր, փայատերեր) 1646 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 84-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող 4 բանկերը, ապա 18 բանկերի մասնակիցները (բաժնետերեր, փայատերեր) 61 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 32-ը՝ ոչ ռեզիդենտներ: 9 բանկում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (8 ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և 1 ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ 15 բանկում 1 բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

Ըստ բանկային համակարգի մասնակիցների տարածաշրջանային բաշխվածության՝ կանոնադրական կապիտալում մեծ տեսակարար կշիռ ունեն ԵՄ-ում և ՌԴ-ում գրանցված մասնակիցները՝ համապատասխանաբար 30.8% և 16.6% (31.12.2013 թ. դրությամբ՝ 33.8% և 15.4%):

Գրաֆիկ 7.

Բանկային համակարգի կանոնադրական կապիտալի կառուցվածքը ըստ ռեզիդենտության



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ներգրաված միջոցները


2014 թվականին բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 18.3%-ով (454.1 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 2 տրլն 941 մլրդ դրամ:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային պարտավորությունները աճել են 13.6%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները՝ 20.9%-ով: Արդյունքում՝ արտարժութային պարտավորությունների տեսակարար կշիռն աճել է 1.4 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 65.3%:

Ընդհանուր պարտավորությունների աճը տեղի է ունեցել հիմնականում բանկերի նկատմամբ պարտավորությունների

Գրաֆիկ 8.


Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 9.


Բանկային համակարգի ցպահանջ ավանդները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 10.

Բանկային համակարգի ժամկետային ավանդները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

(ներառյալ՝ ԿԲ), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց ավանդների աճի հաշվին: Բանկերի նկատմամբ պարտավորություններն աճել են 45.4%-ով (193.7 մլրդ դրամով) և կազմել 620.2 մլրդ դրամ, իսկ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 44.4%-ով (150.6 մլրդ դրամով) և կազմել 490 մլրդ դրամ:

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 5.5%-ով (82.9 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել են 1 տրլն 604.2 մլրդ դրամ: Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային ավանդները նվազել են 0.5%-ով, իսկ արտարժութային ավանդներն ավելացել են 7.9%-ով: Արդյունքում՝ արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում աճել է 1.7 տոկոսային կետով և կազմել 72.6%:

Իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունները նվազել են 18.0%-ով (63.2 մլրդ դրամով), իսկ ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորություններն ավելացել են 8.0%-ով (13.6 մլրդ դրամով)՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 288.1 մլրդ դրամ և 184.4 մլրդ դրամ:

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների ծավալներն ավելացել են 5.8%-ով և կազմել 272.4 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալները՝ 15.9%-ով և կազմել 859.3 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

31.12.2014 թ. դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 95.2% (նախորդ տարի՝ 94.7%): Եթե բացառենք ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունները, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 78.3% (նախորդ տարի՝ 72.9%):


Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում նշանակալի փոփոխություններ տեղի են ունե-

ցել բանկերի (ներառյալ՝ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների և ցպահանջ ու ժամկետային ավանդների մասով. բանկերի (ներառյալ՝ ԿԲ) նկատմամբ և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 3.9 և 3.0 տոկոսային կետով, իսկ ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 4.9 և 1.7 տոկոսային կետով:

Տարեվերջին ներգրաված միջոցների 18%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ), 59%-ը՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ և 24%-ը՝ 1 տարուց ավելի մարման ժամկետայնությամբ (31.12.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 23%, 52% և 25%):

Գրաֆիկ 11.

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Առևտրային բանկերի հաճախորդները

ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաճախորդների քանակը 2014 թվականին ավելացել է 19.4%-ով և տարեվերջին կազմել 2 մլն 267 հազար՝ հիմնականում պայմանավորված ֆիզիկական անձ հաճախորդների քանակի ավելացմամբ: Ֆիզիկական անձ հաճախորդների քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 20%-ով և տարեվերջին կազմել 2 մլն 187 հազար: Իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 4.4%-ով և տարեվերջին կազմել 79.6 հազար:

Տարվա ընթացքում բանկային հաշիվների (ընթացիկ և ժամկետային) քանակն ավելացել է 21%-ով և կազմել 3 միլիոն 31 հազար[2]: Իրավաբանական անձանց հաշիվների քանակն ավելացել է 5.8%-ով և տարեվերջին կազմել 148 հազար: Ֆիզիկական անձանց բանկային հաշիվների (ընթացիկ և ժամկետային) քանակն ավելացել է 21.9%-ով և կազմել 2 միլիոն 883 հազար:

Գրաֆիկ 12.

Բանկային համակարգում ֆիզիկական անձանց բանկային հաշիվները




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, Ազգային վիճակագրական ծառայություն:

[2] *Բանկային հաշիվներում ներառված չեն վարկային հաշիվները:*

Գրաֆիկ 13.


Բանկային համակարգի ակտիվների շարժը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 14.

Բանկային համակարգի ակտիվների կազմը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկային համակարգի տեղաբաշխված միջոցների աճի միտումները

2014 թվականին բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 15.9%-ով (467 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 3 տրլն 411 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված տնտեսությանը տրամադրված վարկերի աճով:

Տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 21.3%-ով և կազմել 2 տրլն 73.4 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ավելացել են համապատասխանաբար 22.2%-ով և 20.2%-ով՝ տարեվերջին կազմելով 1 տրլն 223 մլրդ դրամ և 851 մլրդ դրամ:

ԿԲ-ում թղթակցային հաշիվները և այլ պահանջները ավելացել են 1.8%-ով և կազմել 470.3 մլրդ դրամ: Պետական արժեթղթերում ներդրումների ծավալներն ավելացել են 5.8%-ով և կազմել 238.9 մլրդ դրամ:

Աղյուսակ 6. Ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների կառուցվածքը՝ ըստ երկրների

	31.12.14	31.12.13	Փոփոխություն
Եվրոմիություն	38.6%	38.7%	-0.1%
Գերմանիա	23.7%	17.8%	+5.9%
Ավստրիա	9.0%	7.7%	+1.3%
Մեծ Բրիտանիա	2.2%	5.4%	-3.2%
Ֆրանսիա	2.0%	5.3%	-3.3%
ԵՄ անդամ այլ երկրներ	1.7%	2.5%	-0.8%
ԱՄՆ	49.6%	49.0%	+0.6%
Ռուսաստան	8.5%	10.6%	-2.1%
Այլ երկրներ	3.3%	1.7%	+1.6%

Բանկերում թղթակցային հաշիվները նվազել են 5.5%-ով և կազմել 105.7 մլրդ դրամ: Վերջիններիս բնորոշ է ըստ ռեզիդենտության բարձր կենտրոնացվածությունը: 31.12.2014 թ. դրությամբ թղթակցային հաշիվների 98.9%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 99.6%-ը):

Ըստ երկրների՝ թղթակցային հաշիվների մնացորդների համար հաշվարկած Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը գրեթե չի փոփոխվել՝ տարեվերջին կազմել է 0.3:

Բանկային համակարգի տեղաբաշխված միջոցների կառուցվածքը

Հաշվետու տարում ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների կշիռն ավելացել է 2.4 տոկոսային կետով և կազմել 74.9%: Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների՝ մնացած եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ավելացել է 2.3 տոկոսային կետով և կազմել է 73.1%:

Ակտիվների կառուցվածքում զգալի փոփոխություններ են արձանագրվել տնտեսությանը տրամադրված վարկերի և ԿԲ նկատմամբ պահանջների մասով. տնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռն աճել է 2.7 տոկոսային կետով, իսկ ԿԲ նկատմամբ պահանջները նվազել են 1.9 տոկոսային կետով:


Տարեվերջին տեղաբաշխված միջոցների 22.0%-ը ցպահանջ է, 36.5%-ը՝ մինչև 1 տարի ժամկետայնությամբ և 41.5%-ը՝ 1 տարուց ավելի և անժամկետ (31.12.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 20.5%, 38.0% և 41.5%):

Բանկային համակարգի վարկային ներդրումները (համընդհանուր վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները)

2014 թվականին բանկային համակարգի վարկային ներդրումները (համընդհանուր վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները) ավելացել են 22.4%-ով (415 մլրդ դրամով) և կազմել 2 տրլն 272 մլրդ դրամ: Դրամային վարկային ներդրումներն ավելացել են 5.8%-ով (41.3 մլրդ դրամով) և կազմել 747 մլրդ դրամ, արտարժութային վարկային ներդրումներն ավելացել են 32.5%-ով (373.9 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 151 մլրդ դրամ: Արդյունքում՝ արտարժութային վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուրում աճել է 5.1 տոկոսային կետով և կազմել 67.1%:

Գրաֆիկ 15.


Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 16.


Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ժամկետային կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 17.

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 73.2%-ով և կազմել 102.5 մլրդ դրամ, ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 20.7%-ով և կազմել 2 տրլն 169.3 մլրդ դրամ: Արդյունքում՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 1.3 տոկոսային կետով և կազմել 4.5%:

Ըստ ժամկետային կառուցվածքի՝ երկարաժամկետ վարկային ներդրումների (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) տեսակարար կշիռը ընդհանուրում ավելացել է 3.5 տոկոսային կետով և կազմել 82.7%: Ընդհանուր վարկային ներդրումներում երկարաժամկետ վարկային ներդրումների տեսակարար կշռի ավելացումը տեղի է ունեցել արտարժութային երկարաժամկետ վարկային ներդրումների տեսակարար կշռի աճի հաշվին:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներում աճ արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում՝ բացառությամբ տրանսպորտի և կապի: Տարեվերջի դրությամբ վարկային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են ունեցել սպառողական, արդյունաբերության և առևտրի վարկերը՝ համապատասխանաբար 21.2%, 20.3% և 18.2%:

Բանկային համակարգի՝ ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նվազել է 0.01 տոկոսային կետով և կազմել 0.11: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, աճել է 0.1 տոկոսային կետով և կազմել 0.18, ինչը վկայում է որոշ բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի մասին:

Տնտեսության վարկավորման աշխուժացմանը մեծապես նպաստում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող վարկերը, որոնք հիմնականում երկարաժամկետ են: 31.12.2014 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող 19 բանկ և 12 վարկային կազմակերպություն սպասարկել են.

- Հիփոթեքային վարկավորման ծրագրերի (KFW),
- Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման (KFW),
- Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի (EBRD),

- Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի (EFSE),
- Ասիական զարգացման բանկի (ADB),
- Սևծովյան առևտրի և զարգացման բանկի (BSTDB),
- Համաշխարհային բանկի (WB),
- Եվրասիական զարգացման բանկի (EDB),
- Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC),
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD),
- OPEK-ի միջազգային զարգացման հիմնադրամի,
- Գերմանական ներդրումային կորպորացիայի (DEG),
- Ավստրիայի զարգացման բանկի (OeEB),
- Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի (MCH),
- Ատլանտիկ առևտրի վարկավորման ծրագրի (AFA),
- Եվրոպական ներդրումային բանկի (EIB),
- Կոմերցբանկի (Commerzbank),
- այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող վարկային ծրագրերը:


Միջազգային ծրագրերի շրջանակներում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը 2014 թվականին ավելացել են 13.4%-ով և տարեվերջին կազմել 382.5 մլրդ դրամ: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերում 31.12.2014 թ. դրությամբ բանկերի կողմից տրամադրված ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 1.1%: Վարկային պորտֆելում մինչև 6 ամիս, 6 ամսից 1 տարի և 1 տարի ու ավելի ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 3.9%, 6.3% և 89.8%:

31.12.2014 թ. դրությամբ միջազգային վարկային ծրագրերով վարկավորման հիմնական ուղղություններն են եղել առևտուրը, գյուղատնտեսությունը և մշակող արդյունաբերությունը՝ 27.1%, 23.0%, և 12.8%:

Բանկային համակարգի եկամտաբերությունը

Գրաֆիկ 18.

Եկամտաբերության բնութագրիչ ցուցանիշները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

2014 թվականին բանկային համակարգի զուտ շահույթը՝ հաշվարկված ՀՀ ԿԲ վերահսկողական հաշվետվությունների հիման վրա, կազմել է 21.2 մլրդ դրամ[3]: Տարվա ընթացքում շահույթով է աշխատել 16, իսկ վնասով՝ 6 բանկ:

Շահութաբեր 16 բանկերի շահույթի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցն աճել է 0.02 կետով և կազմել 0.127՝ փաստելով շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության թույլ մակարդակի մասին:

Հաշվետու տարում բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նվազել են. ըստ ակտիվների (RoA) և կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 0.7 և 4.6 տոկոսային կետով և կազմել 0.7% և 4.5%[4]: Զուտ գործառնական մարժան աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 3.2%[5]:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն՝ բանկային համակարգի շահույթը 2014 թվականին կազմել է 25.8 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA) 0.8% է, շահութաբերությունն ըստ կապիտալի (RoE)՝ 5.2%:

Ըստ կապիտալի շահութաբերության բաղկացուցիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա նվազումը տեղի է ունեցել ըստ ակտիվների շահութաբերության նվազման հետևանքով, իսկ լևերիջի ցուցանիշը ազդեցություն չի թողել ըստ կապիտալի շահութաբերության վրա: Ըստ ակտիվների շահութաբերության

---

[3] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:

[4] Սույն վերլուծության իմաստով՝ բանկերի ըստ կապիտալի շահութաբերությունը ներկայացվում է հետևյալ բաղկացուցիչների տեսքով.

$$RoE = \frac{P}{E} = \frac{P}{A} x \frac{A}{E} = L x RoA = L x \left(\frac{II}{A} + \frac{NII}{A} + \frac{IE}{A} + \frac{NIE}{A} + \frac{NLLP}{A}) + \frac{PT}{A}\right)$$

որտեղ՝ P-ն զուտ շահույթ է, E-ն՝ միջին կապիտալը, A-ն՝ միջին ակտիվները, II-ը՝ տոկոսային եկամուտը, NII-ը՝ ոչ տոկոսային եկամուտը, IE-ն՝ տոկոսային ծախսը, NIE-ն՝ ոչ տոկոսային ծախսը, NLLP-ն՝ զուտ մասհանումները, PT-ն՝ շահութահարկը:

[5] Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային եկամտի և զուտ ոչ տոկոսային եկամտի հանրագումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերակցությանը:

նվազումը պայմանավորված է չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճի հետևանքով զուտ մասհանումներ/ակտիվներ հարաբերակցության աճով, ինչպես նաև եկամտաբերության սպրեդի նվազման հետևանքով զուտ տոկոսային մարժայի նվազմամբ: Տարվա ընթացքում զուտ մասհանում/ակտիվներ հարաբերակցությունը աճել է 1.0 տոկոսային կետով և կազմել 2.2%, իսկ զուտ տոկոսային մարժան նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել 4.3%:

Ըստ ակտիվների շահութաբերության վրա դրական է անդրադարձել զուտ ոչ տոկոսային ծախս/ակտիվներ հարաբերակցության 0.4 տոկոսային կետով նվազումը:

Ըստ ակտիվների շահութաբերության (RoA) քվարտիլային վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ տարվա համեմատ նվազել է բանկերի միջև ըստ ակտիվների շահութաբերության մակարդակի ցրվածությունը: Ըստ ակտիվների շահութաբերության միջքվարտիլային միջակայքը նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 1.7%: Միջքվարտիլային միջակայքը նվազել է 3-րդ քվարտիլի և մեդիանայի տարբերության 0.5 տոկոսային կետով նվազման հաշվին: Արդյունքում՝ «3-րդ քվարտիլի և մեդիանայի տարբերությունը» և «մեդիանայի և 1-ին քվարտիլի տարբերությունը» կազմել են համապատասխանաբար 0.6% և 1.1% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 1.1% և 1.1%):


Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը

2014 թվականին բանկային համակարգի համախառն եկամուտներն ավելացել են 17.4%-ով, իսկ համախառն ծախսերը՝ 23.5%-ով: Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտներն ավելացել են 9.4%-ով, ոչ տոկոսային եկամուտները՝ 21.8%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը՝ 26.6%-ով:

Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 10.9%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 7.5%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումները՝ 38.8%-ով:

Գրաֆիկ 19.


Ըստ կապիտալի շահութաբերության (RoE) փոփոխությունը պայմանավորող գործոնների մասնակցությունը (contribution) ընդհանուր փոփոխության մեջ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 20.


Բանկային համակարգի՝ ըստ ակտիվների շահութաբերության մակարդակը (RoA)




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 21.

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը





Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Եկամուտների և ծախսերի նշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը նվազել է 3.4 տոկոսային կետով, իսկ ոչ տոկոսային եկամուտների և ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների վերադարձի տեսակարար կշիռները աճել են համապատասխանաբար 0.5 և 2.9 տոկոսային կետով: Համախառն ծախսերի կառուցվածքում տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները նվազել են 3-ական տոկոսային կետով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումների տեսակարար կշիռն աճել է 6.0 տոկոսային կետով: Եկամուտների և ծախսերի կառուցվածքում փոփոխությունները հիմնականում պայմանավորվել են տարվա ընթացքում չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճով և համեմատաբար բարձր տատանողականությամբ:

Բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից (ներառյալ՝ օվերդրաֆտից, վարկային գծերից, վարկային քարտերից) ստացած եկամուտների աճով, ընդ որում՝ վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտներում կազմել է 84.7% (նախորդ տարի՝ 83.9%):

Ոչ տոկոսային եկամուտների կազմում հիմնականում ավելացել են միջնորդավճարներից ստացվող եկամուտները և արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտները: Ոչ տոկոսային եկամուտներում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն միջնորդավճարներից և արտարժույթի առուվաճառքից ստացված եկամուտները՝ համապատասխանաբար 45.1% և 22.2% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 45.9% և 22.0%):

Տոկոսային ծախսերը հիմնականում աճել են ժամկետային ավանդների գծով տոկոսավճարների հաշվին: Ընդհանուր տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն ժամկետային ավանդների դիմաց և առևտրային բանկերից ու այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց տոկոսավճարների գծով ծախսերը՝ համապատասխանաբար 57.1% և 18.4% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 54.0% և 18.6%):

Ոչ տոկոսային ծախսերի աճը հիմնականում պայմանավորվել է աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների աճով, որոնց բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերի 48.8%-ը (նախորդ տարի՝ 47.7%-ը):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

2014 թվականին բանկային համակարգի ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում, և ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկեր չեն դիտարկվել: Տարվա ընթացքում առևտրային բանկերում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը մշտապես գտնվել է պահանջվող նվազագույն սահմանաչափից բարձր: Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նույնպես առևտրային բանկերում պահպանվել են պահանջվող նորմատիվային սահմանաչափերի ներքո:

Աղյուսակ 7. Առևտրային բանկերի նորմատիվային ցուցանիշները


Նորմատիվային ցուցանիշ	31.12.13	31.12.14	Փոփոխություն	Նորմատիվային սահմանաչափ
Ընդհանուր նորմատիվային կապիտալի համարժեքություն	16.7%	14.5%	-2.2%	≥ 12%
Ընդհանուր իրացվելիություն	29.1%	25.1%	-4.0%	≥ 15%
Ընթացիկ իրացվելիություն	142.3%	129.4%	-12.9%	≥ 60%
Մեկ խոշոր փոխառուի գծով ռիսկ	16.1%	19.1%	+3.0%	≤ 20%
Բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկ	157.0%	183.2%	+26.2%	≤ 500%
Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկ	2.8%	3.9%	+1.1%	≤ 5%
Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկ	9.2%	11.4%	+2.2%	≤ 20%

Վարկային ռիսկ

ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկը շարունակում է դիտարկվել որպես կարևորագույն ռիսկ: Առևտրային բանկերի

Գրաֆիկ 22.


Առևտրային բանկերի՝ ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 23.


Վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ ռիսկի դասերի



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 24.

Ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկային պորտֆելի որակի փոփոխությունը 2013-2014 թթ.[6]



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ռիսկով կշռված ակտիվներում վարկային ռիսկի մասնաբաժինը կազմել է 89.9% (նախորդ տարի՝ 91.2%): Այս համատեքստում վարկային ռիսկի պատշաճ կառավարումը խիստ կարևորվում է բանկային համակարգի կայունության ապահովման տեսանկյունից:

Ըստ վարկային ներդրումների ռիսկայնության՝ չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվետու տարում ավելացել են 86.2%-ով (70.1 մլրդ դրամով) և կազմել 151.5 մլրդ դրամ, իսկ ստանդարտ վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 20.3%-ով (372.8 մլրդ դրամով) և կազմել 2 տրլն 204.9 մլրդ դրամ: Արդյունքում՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի վարկային ռիսկի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր) տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում տարվա ընթացքում ավելացել է 2.2 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 6.4%:

Ըստ ռիսկայնության դասերի՝ ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 3.1%, 1.9% և 1.4% (31.12.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 2.2%, 1.1%, 1.0%):

Ըստ տնտեսության ճյուղերի՝ չաշխատող վարկերի տեսակարար կշռի զգալի աճ արձանագրվել է շինարարության, գյուղատնտեսության և առևտրի վարկերում. նշված ճյուղերի չաշխատող վարկերի տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 8.9, 3.0 և 2.8 տոկոսային կետով և կազմել 17.2%, 5.5% և 6.6%: Արդյունքում՝ նշված ճյուղերի չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային պորտֆելի չաշխատող վարկերում աճել է համապատասխանաբար 3.2, 1.3 և 0.6 տոկոսային կետով:

Ըստ ռեզիդենտության՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի 96.7%-ը տարեվերջին բաժին է ընկել ռեզիդենտներին, իսկ 3.3%-ը՝ ոչ ռեզիդենտներին (31.12.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 97.0%-ը և 3.0%-ը):

[6] *Գծապատկերում շրջանակների տրամագիծը ուղիղ համեմատական է բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելում տնտեսության համապատասխան ճյուղի վարկային ներդրումների տեսակարար կշռին: Շրջանակների միջև սլաքի ուղղությունը և մեծությունը ներկայացնում են 2013-2014 թթ. ընթացքում տվյալ ճյուղի չաշխատող վարկերի տեսակարար կշռի փոփոխությունը:*

2014 թվականին ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների և միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը աճել է 1.0 տոկոսային կետով և կազմել 2.2%:


Նախորդ տարվա համեմատ՝ զուտ չաշխատող վարկերի ու դեբիտորական պարտքերի և նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ավելացել է 10 տոկոսային կետով և կազմել 19.3%[8]: Զուտ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի նույնիսկ ամբողջական դուրսգրման դեպքում (անտեսելով գրավադրված գույքի արժեքը) բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը կլինի պահանջվող նվազագույն սահմանաչափից բարձր՝ 12.03%[9]:

Աղյուսակ 8. Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ [10]

31.12.2014 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	28.0 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 6.2%-ը	10.4 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 2.3%-ը	62.8 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 13.9%-ը
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի դրսևորվելու դեպքում	13.7%	14.2%	12.7%

Գրաֆիկ 25.

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստները [7]



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[7] *Անհուսալի վարկային ռիսկի դաս ունեցող ակտիվները և դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստը չեն ներկայացվել գծապատկերում: Անհուսալի ճանաչված ակտիվների գծով բանկերը ձևավորում են 100%-ի չափով հնարավոր կորուստների պահուստ և դուրսգրում հաշվեկշռից:*

[8] *Զուտ չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվարկվել են որպես չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային մեծության և ակտիվների հնարավոր կորուստների պահուստի մեծության տարբերություն:*

[9] *Ծածկույթ չունեցող չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը սահմանվում են որպես չաշխատող վարկերի ու դեբիտորական պարտքերի և ձևավորված հնարավոր կորուստների պահուստի տարբերություն:*

[10] *Հաշվետվությունում ներկայացված այս և հաջորդ սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևորումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս կողմից ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:*

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի[11] արդյունքների համաձայն՝ բանկային համակարգի հնարավոր կորստի մեծությունը տարեսկզբին իրականացված նույն սթրես-թեստերի արդյունքների համեմատ աճել է՝ հիմնականում պայմանավորված վարկերում և դեբիտորական պարտքերում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի աճով:

Արտարժութային ռիսկ

2014 թվականի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին տարեկան փոխարժեքը արժեզրկվել է 1.5%-ով, իսկ տարեսկզբի նկատմամբ արժեզրկումը կազմել է 14.6%: Արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է 3.9 մլրդ դրամի օգուտ (նախորդ տարի՝ 477 մլն դրամի վնաս), ընդ որում՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում 13 բանկ կրել է վնաս, իսկ 9 բանկ ունեցել է օգուտ: Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների արդյունքում բանկային համակարգը հաշվետու տարում ապահովել է 18.2 մլրդ դրամ զուտ եկամուտ (նախորդ տարի՝ 14.8 մլրդ դրամ): Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 31.12.2014 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում տասնօրյա հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 731 մլն դրամը (31.12.2013 թ. դրությամբ՝ 93 մլն դրամը):

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքների համաձայն՝ արտարժույթի փոխարժեքային տատանումներից բանկային համակարգի վնասները նշանակալի չեն, ինչը պայմանավորված է բանկերի կողմից արտարժութային ռիսկի պատշաճ կառավարմամբ: 31.12.2014 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժութային զուտ կարճ դիրքը (ածանցյալ գործիքները ներառյալ) կազմել է 25.8 մլրդ դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 5.7%-ը (31.12.2013 թ. դրությամբ՝ բացասական 370 մլն դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.1%-ը):

[11] Սթրես-սցենարները կառուցված են բանկերի վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման ենթադրությունների պայմաններում (ըստ որոնց՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը չի դիտարկվում):

Աղյուսակ 9. Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

31.12.2014 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժեզրկման, (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժեզրկման, (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	1.4 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.3%-ը (1.4 մլրդ դրամ)	49.6 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.01%-ը (49.6 մլն դրամ)	730.5 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.2 %-ը

Իրացվելիության ռիսկ


2014 թվականի ընթացքում ֆինանսական միջնորդության խորացման պայմաններում արձանագրվել է բանկային համակարգի իրացվելիության նվազում: Տարեսկզբի համեմատ՝ առևտրային բանկերի բարձր իրացվելի ակտիվներն ավելացել են 2.3%-ով, այն դեպքում, երբ իրացվելիության նորմատիվային ցուցանիշների հաշվարկին մասնակցող ընդհանուր ակտիվներն ավելացել են 18.6%-ով, իսկ ցպահանջ պարտավորությունները՝ 12.5%-ով: Արդյունքում՝ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 4.0 և 12.9 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 25.1% և 129.4% (նվազագույն սահմանային չափերը՝ համապատասխանաբար 15% և 60%):

Բանկային համակարգի պարտավորությունների կենտրոնացվածության տեսանկյունից՝ հաշվետու տարում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 1.7 տոկոսային կետով և կազմել՝ 24.5%[12]:

Վարկերի ֆինանսավորման միջոցների կայունության տեսանկյունից՝ վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշը ավելացել է 16.9 տոկոսային կետով և կազմել 129.4%:

Գրաֆիկ 26.

Առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշների շարժը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[12] *Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:*

Գրաֆիկ 27.

Առևտրային բանկերի վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշի շարժը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Աղյուսակ 10. Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

31.12.2014 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	19.5%	21.3%	15.0%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	93.0%	138.7%	90.7%

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքների համածայն՝ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները վատթարացել են տարեսկզբին իրականացված նույն սթրես-թեստերի արդյունքների համեմատ՝ պայմանավորված հաշվետու տարում բանկային համակարգի իրացվելիության նվազմամբ: Ըստ դիտարկվող վատթարագույն սցենարի՝ որոշ բանկերում արձանագրվում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների խախտման դեպքեր, սակայն այդ բանկերում բարձր իրացվելի ակտիվների ծավալն ամբողջությամբ բավարար է պարտավորությունների սցենարներում ենթադրվող արտահոսքը ծածկելու համար:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը ՀՀ բանկային համակարգում շարունակում է գնահատվել բավականին ցածր: Տարեսկզբի համեմատ՝ բանկային համակարգի շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում նվազել է 0.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 6.0%:

2014 թ. շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 704 մլն դրամի զուտ եկամուտ (ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.2%-ը):

Աղյուսակ 11. Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ

Անշարժ գույքի 30% արժեզրկման սցենար	31.12.2014 թ.
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված բանկի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերագնահատմամբ *(գնային ռիսկ)*	13.3 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 3.0%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[13] 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) *(վարկային ռիսկ)*	11.6 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 2.6%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի 100%-ով չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) *(վարկային ռիսկ)*	38.6 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 8.5%-ը)

Գնային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքների համաձայն՝ դիտարկվող վատթարագույն սցենարներում բանկային համակարգի հնարավոր վնասները զգալի չեն: Այս համատեքստում անշարժ գույքի գների տատանողականությունից բխող վարկային և գնային ռիսկերի հնարավոր բացասական ազդեցությունը բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա գնահատվում է բավականին փոքր:

Տոկոսադրույքի ռիսկ

Հաշվետու տարում պահպանվել է ավանդների տոկոսադրույքների աճի և վարկերի տոկոսադրույքների նվազման թույլ արտահայտված միտումը: Տնտեսությանը տրամադրված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը 2014 թվականին նվազել է 0.1 տոկոսային կետով, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքն աճել է 0.2 տոկոսային կետով: Արդյունքում՝ վարկերի և ավանդների տոկոսադրույքի սպրեդը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 6.1%:

Բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը վերջին տարիներին գրեթե չի փոփոխվում՝ տատանվելով կես տարվա մի-

[13] *Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարի մեծությունն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:*

ջակայքում: Այս պայմաններում շուկայական տոկոսադրույքների տատանումների դեպքում բանկերը կարող են բավականին արագ արձագանքել և վերանայել տոկոսադրույքները:

Աղյուսակ 12. Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

31.12.2014 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ	
	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով ճվազման (աճի) ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա՝ գնահատված *«դյուրացիայի մեթոդով»*	**Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով ճվազման (աճի) դեպքում առաջիկա երեք ամսվա զուտ տոկոսային եկամտի՝ սպասվող եկամտից շեղում՝ գնահատված *«տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեթոդով»***
Բանկային համակարգի օգուտ/վնաս	-11.6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 2.6%-ը (11.6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 2.6%-ը)	-1.2 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.2%-ը (1.2 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.2%-ը)

Տոկոսադրույքի գնահատման սթրես-թեստերի արդյունքների համաձայն՝ շուկայական տոկոսադրույքների տատանումների արդյունքում ըստ առանձին բանկերի հնարավոր կորուստները ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ տատանվում են միջինում 4.2%-ի շրջանակներում: Այս տեսանկյունից տոկոսադրույքի ռիսկը կառավարելի շրջանակներում է:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ տարածքում գործող վարկային ընկերություններ

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են երեսուներկու վարկային կազմակերպություններ, որոնցից երեքը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն, քսանվեցը՝ ունիվերսալ և երկուսը՝ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություններ: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակն ավելացել է 23-ով և տարեվերջին կազմել 149:

Կենտրոնացվածությունը ՀՀ վարկային կազմակերպություններում

Աղյուսակ 13. Վարկային կազմակերպությունների կենտրոնացվածության մակարդակը (%)

Նորմատիվային ցուցանիշ	31.12.14	31.12.13	Փոփոխություն
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4	45.3	44.2	1.1
ԿԳ 10	74.8	74.4	0.4
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	35.6	48.3	-12.7
ԿԳ 10	68.6	77.4	-8.8
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	59.4	57.5	1.9
ԿԳ 10	83.8	80.4	3.4
Տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ՝ լիզինգ)			
ԿԳ 4	24.1	44.8	-20.7
ԿԳ 10	64.2	73.6	-9.4

Վարկային կազմակերպությունների ակտիվների կենտրոնացվածության մակարդակը տարվա ընթացքում գրեթե չի փոխվել, սակայն պարտավորությունների և տնտեսությանը տրամադրված վարկերի (ներառյալ՝ լիզինգ) կենտրոնացվածու-

թյան մակարդակը նվազել է: Մասնավորապես՝ խոշորագույն 4 վարկային կազմակերպությունների պարտավորությունների և տնտեսությանը տրամադրված վարկերի մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար 12.7%-ով և 20.7%-ով և կազմել 35.6% և 24.1%:

Տարբեր ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը տատանվում է 0.07-ից 0.1-ի միջակայքում՝ վկայելով համակարգի թույլ կենտրոնացվածության մասին:

Հաշվետու տարում խոշոր և մանր վարկային կազմակերպությունների միջև գրեթե բոլոր ցուցանիշների (բացառությամբ՝ ընդհանուր պարտավորությունների) բևեռացվածության նվազում է արձանագրվել:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Վարկային կազմակերպությունների կապիտալը

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 41%-ով՝ պայմանավորված կանոնադրական կապիտալի համալրմամբ և ընթացիկ գործունեությունից ստացված շահույթով:

Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը հաշվետու տարում նվազել է 0.5 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 22.3%: Ոչ ռեզիդենտների փայամասնակցությամբ 14 վարկային կազմակերպություններից 6-ը ամբողջությամբ օտարերկրյա մասնակցությամբ ընկերություններ են: Ամբողջությամբ օտարերկրյա մասնակցությամբ ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռը վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում կազմել է 28.5% (31.12.2013 թ. դրությամբ՝ 22.5%):

Գրաֆիկ 28.

Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Վարկային կազմակերպությունների պարտավորությունները


Վարկային կազմակերպությունների պարտավորություններն ավելացել են 20.6%-ով և կազմել 159.5 մլրդ դրամ: Պարտավորությունների կազմում հիմնականում ավելացել են պարտավորությունները այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 37.4%-ով, ռեպո համաձայնագրերով ներգրաված միջոցները՝ 68%-ով և ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները՝ 107.9%-ով:

Իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները նվազել են 7.4%-ով և տարեվերջին կազմել 17.4 մլրդ դրամ: Ըստ արժութային կառուցվածքի՝ ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունների կազմում դրամային պարտավորություններն ավելացել են 26.5%-ով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ 1%-ով:

2014 թվականին վարկային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքում 11.2%-ով աճել են պարտավորությունները ՀՀ Կառավարության նկատմամբ և 53.7%-ով (կամ 2.6 մլրդ դրամով) այլ պարտավորությունները:

Գրաֆիկ 29.

Վարկային կազմակերպությունների ակտիվների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Վարկային կազմակերպությունների ակտիվները


Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները տարվա ընթացքում ավելացել են 28.3%-ով և տարեվերջին կազմել 269.1 մլրդ դրամ: Գործող կազմակերպություններից 22-ում տարեվերջին արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 10-ում՝ նվազում:

Ակտիվների կազմում 41.6%-ով ավելացել են պահանջները բանկերի նկատմամբ, 22.2%-ով՝ տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ՝ լիզինգը)՝ համապատասխանաբար կազմելով 75.3 մլրդ դրամ և 165.8 մլրդ դրամ:

Վարկավորման աճ արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում՝ բացառությամբ կեցության և հանրային սննդի կազմակերպման և հիփոթեքային վարկավորման ոլորտների:

Գրաֆիկ 30.


Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների փոփոխությունը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 31.

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Հատկապես բարձր աճի տեմպեր են արձանագրվել ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և սպառողական վարկերում՝ համապատասխանաբար 40%, 29.4% և 55.6%: Վարկային ներդրումներում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և սպառողական (ներառյալ՝ հիփոթեքային) վարկերը՝ համապատասխանաբար 33.3%, 20.5% և 11.7%:

Վարկային կազմակերպությունների չաշխատող («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասերի) ակտիվների տեսակարար կշիռը տարվա ընթացքում աճել է 1.1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 4.9%: Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ավելի մեծ է գյուղատնտեսության, փոխադրումների, կեցության ու հանրային սննդի կազմակերպման և առևտրային վարկերում՝ համապատասխանաբար 24.9%, 7.9%, 6.2% և 5.8%:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների կառուցվածքում զգալի փոփոխություններ են արձանագրվել բանկերի նկատմամբ պահանջների, իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի մասով. իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 1.2 և 1.0 տոկոսային կետով, իսկ բանկերի նկատմամբ պահանջների տեսակարար կշիռն աճել 2.6 տոկոսային կետով:

Վարկային կազմակերպությունների ֆինանսական արդյունքները

Վարկային կազմակերպությունների վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված զուտ շահույթի մեծությունը 2014 թվականին կազմել է 9.8 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով են աշխատել 29, իսկ վնասով՝ 3 վարկային կազմակերպություններ: Վարկային կազմակերպությունների ընդհանուր զուտ շահույթի մեծությունը կազմել է 9.8 մլրդ դրամ:

Նախորդ տարվա համեմատ՝ վարկային կազմակերպությունների շահութաբերությունը ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) նվազել են համապատասխանաբար 1.1 և 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 4.1% և 10.3%:

2014 թվականին վարկային կազմակերպությունների զուտ շահույթը՝ հաշվարկված ըստ ՖՀՄՍ-ի[14], կազմել է 7.9 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA)՝ 3.1%, իսկ ըստ կապիտալի (RoE)՝ 7.6%:

Վարկային կազմակերպությունների տոկոսային եկամուտներն ավելացել են 29.2%-ով: Ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում տնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 0.2%-ով՝ կազմելով 75.2%:


Ոչ տոկոսային եկամուտներն աճել են 22.5%-ով՝ հիմնականում պայմանավորված արտարժույթի վերագնահատումից ստացված 1.2 մլրդ դրամ օգուտով: Վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուր ոչ տոկոսային եկամուտներում աճել է 13.6 տոկոսային կետով և կազմել 13.3%:


Տոկոսային ծախսերն ավելացել են 30.5%-ով՝ հիմնականում պայմանավորված առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերի և ժամկետային փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսների աճով: Տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց վճարվելիք տոկոսների և ժամկետային փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 45.2% և 28.6% (նախորդ տարի՝ 47.6% և 28.1%):

Ոչ տոկոսային ծախսերն ավելացել են 23.2%-ով՝ հիմնականում պայմանավորված հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների աճով: Վերջինս կազմել է ոչ տոկոսային ծախսերի 58.7%-ը (նախորդ տարի՝ 60.5%-ը):

Գրաֆիկ 32.

Վարկային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքը





Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[14] *ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ-ի համաձայն հաշվարկված շահույթի մեծությունների խոշոր տարբերության հիմնական պատճառը ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է, քանի որ կազմակերպությունները այդչափով ծախս են ճանաչում:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններ

31.12.2014 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեության լիցենզիա են ունեցել 8 ապահովագրական ընկերություններ՝ 25 մասնաճյուղերով[15]: Դադարեցվել է «Գարանտ-Լիմենս» ընկերության գործունեության լիցենզիան: Բոլոր ապահովագրական ընկերությունները իրականացրել են ոչ կյանքի ապահովագրություն:

Կենտրոնացվածությունը ՀՀ ապահովագրական համակարգում


Ապահովագրական համակարգի կենտրոնացվածությունը բնութագրող Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցն ըստ հիմնական ցուցանիշների 2014 թվականին ունեցել է աճի միտում:

Աղյուսակ 14. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

	31.12.12	31.12.13	31.12.14
Ակտիվներ	0.17	0.18	0.20
Պարտավորություններ	0.21	0.22	0.24
Կապիտալ	0.15	0.13	0.15
Ապահովագրական գումարներ	0.23	0.26	0.29
Ապահովագրավճարներ	0.19	0.20	0.23

Գրաֆիկ 33.

Հիմնական ցուցանիշների կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[15] *31.12.2014 թ. ամփոփված են փաստացի գործող և հաշվետու 7 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները, քանի որ 1 ընկերություն, ունենալով ապահովագրական գործունեության լիցենզիա, գործունեություն չի իրականացրել:*


Աղյուսակ 15. Ապահովագրական համակարգի կենտրոնացվածության մակարդակը (%)

	31.12.12	31.12.13	31.12.14
Ակտիվներ			
ԿԳ 2 (խոշորագույն **երկու** ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	49	50	55
ԿԳ 5 (խոշորագույն **հինգ** ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	84	85	87
Պարտավորություններ			
ԿԳ 2	57	58	64
ԿԳ 5	91	93	96
Կապիտալ			
ԿԳ 2	36	32	41
ԿԳ 5	76	73	83
Ապահովագրական գումարներ			
ԿԳ 2	62	66	71
ԿԳ 5	89	94	94
Ապահովագրավճարներ			
ԿԳ 2	54	52	60
ԿԳ 5	90	91	94

Ապահովագրական ընկերությունների միջև բևեռացվածությունը նախորդ տարվա համեմատ աճել է: Ընդ որում՝ աղյուսակ 15-ում ներկայացված բոլոր ցուցանիշների կենտրոնացվածության մակարդակն աճել է՝ բացառությամբ ապահովագրական գումարների:

Գրաֆիկ 34.

Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը



1. Կանոնադրական կապիտալ,
2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ,
3. Ընդհանուր կապիտալի այլ տարրեր

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ

Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալը 2014 թվականին նվազել է 1.3%-ով՝ կազմելով 15.8 մլրդ դրամ: Կանոնադրական կապիտալը նվազել է 4.2%-ով՝ կազմելով 14.1 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 193.3%՝ գերազանցելով պահանջվող սահմանաչափը 93.3 տոկոսային կետով (կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափը կազմել է 100%):

31.12.2014 թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը կազմել է 51.6%: Ոչ ռեզիդենտների փայամասնակցությամբ 3 ապահովագրական ընկերություններից 1-ում ոչ ռեզիդենտների մասնակցությունը կազմել է 100%:


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների ակտիվները հաշվետու տարում նվազել են 13.2%-ով և 31.12.2014 թ. դրությամբ կազմել մլրդ դրամ:


Գրաֆիկ 35.

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքը

31.12.2013 թ.



31.12.2014 թ.




1. Ավանդներ բանկերում, 2. Ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով, 3. Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր, 4. Պետական և ոչ պետական արժեթղթեր, 5. Հիմնական միջոցներ, 6. Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ, 7. Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական պահուստներում, 8. Տրամադրված փոխառություններ, 9. Բանկային հաշիվներ, 10. Այլ ակտիվներ

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 36.

Ապահովագրական ընկերությունների ակտիվների շարժը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ընթացիկ տարում ավանդները բանկերում նվազել են 7.4%-ով՝ կազմելով 14.2 մլրդ դրամ: Տարեվերջի դրությամբ ապահովագրական համակարգի ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ավանդները բանկերում (32.7%), ապահովադիրներից ստացվելիք գումարներն ուղղակի ապահովագրության գծով (12.7%) և պետական արժեթղթերը (9.3%): Ավանդների 83.2%-ը բաժին է ընկել ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներին, իսկ 16.8%-ը՝ ոչ ընթացիկ ավանդներին:


Ապահովագրական համակարգի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բարձր իրացվելի ակտիվներում՝ վկայելով, որ ապահովագրական ընկերություններն իրացվելիության խնդիր չունեն: Ընդ որում՝ 2014 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից իրացվելիության նորմատիվի խախտում չի արձանագրվել:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները 2014 թվականին նվազել են 18.7%-ով՝ տարեվերջին կազմելով 27.7 մլրդ դրամ:

Գրաֆիկ 37.

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների շարժը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Գրաֆիկ 38.

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կառուցվածքը

31.12.2013 թ.



31.12.2014 թ.



1. Տեխնիկական պահուստներ, 2. Ռեպո համաձայնագրեր, 3. Ներգրավված փոխառություններ, 4. Վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ, 5. Ապահովագրության գծով ստացված կանխավճարներ, 6. Վճարվելիք գումարներ միջնորդներին, 7. Վճարվելիք հատուցումներ ուղղակի ապահովագրության գծով, 8. Այլ պարտավորություններ


Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

31.12.2014 թ. դրությամբ պարտավորությունների կազմում մեծ տեսակարար կշիռ են ունեցել տեխնիկական պահուստները (56.4% կամ 15.6 մլրդ դրամ) և ռեպո համաձայնագրերը (16.2% կամ 4.5 մլրդ դրամ): Ընթացիկ տարում տեխնիկական պահուստները նվազել են 9.4%-ով՝ կազմելով 15.6 մլրդ դրամ: Տեխնիկական պահուստների գերակշիռ մասը (69.4% կամ 10.8 մլրդ դրամ) կազմել են չվաստակած ապահովագրավճարների պահուստները (ՉԱՊ):

Տեխնիկական պահուստների նվազումը 2014 թվականին պայմանավորված էր ապահովագրական ընկերությունների կողմից պետական ծառայողների առողջության ապահովագրության դադարեցմամբ: Պետական ծառայողների՝ 2014 թվականի առողջության ապահովագրության վճարները Ֆինանսների նախարարությունը փոխանցել է Առողջապահության նախարարությանը, որն էլ սպասարկել է հաճախորդներին:

Գրաֆիկ 39.

Ապահովագրական համակարգի հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքը



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Դժբախտ պատահարներից 8. Աջակցության, 9. Ապահովագրության այլ դասեր

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված զուտ շահույթի մեծությունը 2014 թվականին կազմել է 1.9 մլրդ դրամ: Ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 4.0%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 10.9%: Հարկ է նշել, որ յոթ ապահովագրական ընկերություններ աշխատել են շահույթով, մեկը՝ վնասով. ընդ որում՝ շահույթով աշխատած ընկերությունների շահույթը կազմել է 2.1 մլրդ դրամ, իսկ վնասով աշխատած ընկերությունների վնասը՝ 186.1 մլն դրամ: Ապահովագրական համակարգի կառուցվածքում մեծ կշիռ են կազմել ապահովագրական հատուցումները և զուտ տեխնիկական պահուստները՝ 51.8%: Ապահովագրական ընկերությունների զուտ տոկոսային եկամուտները կազմել են 814.7 մլն դրամ: Տոկոսային եկամուտների 52.6%-ը (կամ 1.5 մլրդ դրամը) բաժին է ընկել բանկերում ներդրված ընթացիկ ավանդների և բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով տոկոսային եկամուտներին: Տարվա ընթացքում ապահո-

վագրական ընկերությունների զուտ ոչ տոկոսային եկամուտները կազմել են -6.9 մլրդ դրամ: Ոչ տոկոսային ծախսերի 50.3%-ը (կամ 4.0 մլրդ դրամը) բաժին է ընկել ապահովագրական ընկերությունների աշխատակազմի գծով ծախսերին: Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշը կազմել է 53.7%[16]՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8.5 տոկոսային կետով, իսկ ծախսատարության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.9 տոկոսային կետով և տարեվերջի դրությամբ կազմել 29.4%[17]:

ՖՀՄՄ-ի համաձայն՝ ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը 2014 թվականին կազմել է 2.4 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 5.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 13.6%:


2014 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 30.1 մլրդ դրամ (2013 թվականին՝ 35.8 մլրդ դրամ): Հաշվեգրված ապահովագրավճարների 59.1%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը, իսկ 14.6%-ը՝ առողջության ապահովագրությանը:

Ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված հատուցումների մեծությունը 2014 թ. կազմել է 22.1 մլրդ դրամ (2013 թվականին՝ 19.7 մլրդ դրամ): Հաշվեգրված ապահովագրական հատուցումների 44.3%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը, իսկ 20.7%-ը՝ առողջության ապահովագրությանը:

Ապահովագրական ընկերությունների եկամուտների կառուցվածքում շարունակել են մեծ կշիռ կազմել վաստակած ապահովագրավճարները՝ 86.8%: Ծախսերի կառուցվածքում մեծ կշիռ են կազմել ապահովագրական հատուցումները և զուտ տեխնիկական պահուստները՝ 51.8%:

Գրաֆիկ 40.

Ապահովագրական համակարգի հաշվեգրված հատուցումների կառուցվածքը



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Դժբախտ պատահարներից 8. Սքակցության, 9. Ապահովագրության այլ դասեր


Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[16] *Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ հատկացումներ տեխնիկական պահուստներին (բացառությամբ ՉԱՊ) + այլ գործառնական ծախսեր ապահովագրության գծով) / (զուտ վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող գումարներ):*

[17] *Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր / (զուտ վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող գումարներ):*

Գրաֆիկ 41.

Ապահովագրական համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հաշվետու տարվա վերջի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակը կազմել է 594.9 հազար, ինչը 5.6%-ով ավելի է 31.12.2013 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակից: Ապահովագրական գումարները 2014 թվականի վերջի դրությամբ կազմել են 9.5 տրլն դրամ՝ 16.9%-ով գերազանցելով 2013 թվականի համապատասխան ցուցանիշը: Ապահովագրության պայմանագրերի և գումարների աճը հիմնականում պայմանավորված է տարեվերջին ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության պայմանագրերի ավելացմամբ: Տեղի է ունեցել օդանավերի և օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դասերի գծով ապահովագրական գումարների աճ՝ 31.12.2014 թվականին կազմելով 465.4 մլրդ դրամ: Առողջության ապահո-

Գրաֆիկ 42.

31.12.2014 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի կառուցվածքը



1. Յամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Յամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Դժբախտ պատահարներից 8. Աջակցության, 9. Ապահովագրության այլ դասեր

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


վագրության դասի գծով տեղի է ունեցել 458.0 մլրդ դրամ ապահովագրական գումարի նվազում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Կառավարության որոշմամբ ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սոցիալական փաթեթի շրջանակներում պարտադիր առողջության ապահովագրություն այլևս չի իրականացվում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2014 թ. վերջի դրությամբ վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 3.3 տրլն դրամ կամ ապահովագրական ընկերությունների ստանձնած ռիսկերի 34.1%-ը: 2014 թվականին վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունը կազմել է 3.6 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 12.0%-ը, իսկ վերաապահովագրողներից ստացվող գումարների մեծությունն ապահովագրական հատուցումների գծով կազմել է 6.6 մլրդ դրամ կամ հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների 42.2%-ը:

Գրաֆիկ 43.

31.12.2014 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների կառուցվածքը



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Դժբախտ պատահարներից, 8. Աջակցության, 9. Օդանավերի և օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության, 10. Ապահովագրության այլ դասեր

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

31.12.2014 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ են մատուցել 21 առևտրային բանկեր և 8 ներդրումային ընկերություններ: Ներդրումային ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, վեցը կարող են իրենց անունից և իրենց հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, վեցը՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել ու հաղորդել, հինգը՝ արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

2014 թվականի վերջի դրությամբ ՀՀ ֆինանսական շուկայում գրանցված են եղել 4 ներդրումային ֆոնդի կառավարիչներ: ՀՀ ԿԲ կողմից կորպորատիվ ֆոնդի կարգավիճակով գրանցվել է նաև 1 վենչուրային ֆոնդ:

Տարվա ընթացքում ներդրումային ընկերությունների ակտիվների և պարտավորությունների կենտրոնացվածության մակարդակը ցուցաբերել է աճի միտում, իսկ կապիտալի մասով՝ մնացել անփոփոխ:


Աղյուսակ 16. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.2012	31.12.2013	31.12.2014
Ընդհանուր ակտիվներ	0.19	0.19	0.20
Ընդհանուր պարտավորություններ	0.20	0.19	0.21
Ընդհանուր կապիտալ	0.17	0.19	0.19

Ներդրումային ընկերությունների ակտիվները նախորդ տարվա համեմատ նվազել են 6.0%-ով՝ կազմելով 25.4 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալը նվազել է 4.6%-ով՝ տարեվերջին կազմելով 4.9 մլրդ դրամ: 2014 թվականին ներդրումային ընկերու-

Գրաֆիկ 44.


Ներդրումային ընկերությունների ակտիվների ծավալը և վերջիններիս աճի տեմպը 2004-2014 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 45.


2008-2014 թթ. ներդրումային ընկերությունների կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ծավալները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 46.


Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերով գործառնությունների ծավալները (առանց Կենտրոնական բանկի գործառնությունների) 2008-2014 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 47.

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների կառուցվածքը 2007-2014 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

թյունների զուտ շահույթը կազմել է 1.1 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից վեցը, իսկ երկուսը տարին ավարտել են վնասով:

ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը (ներառյալ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների) աճել է 36.4%-ով և կազմել 3 տրլն 350 մլրդ դրամ:

ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (առանց ՀՀ ԿԲ հետ իրականացված գործառնությունների) կազմել է արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության 83.3%-ը: Նախորդ տարվա համեմատ ռեպո գործառնությունների ծավալը աճել է 58.2%-ով և կազմել 2 տրլն 791 մլրդ դրամ:

Կնքված ռեպո գործառնությունների մեջ գրեթե բոլորը՝ 99.8%-ը, կազմել են պետական արժեթղթերով կատարված գործարքները, ընդ որում՝ մեծ մասը՝ 61.9%-ը, շարունակել են կազմել պետական միջնաժամկետ պարտատոմսերը, 38.0%-ը՝ երկարաժամկետ պարտատոմսերը և 0.1%-ը՝ կարճաժամկետ պարտատոմսերը:

Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ ևս գերակշռել են պետական արժեթղթերով իրականացվող գործառնությունները՝ կազմելով 333.0 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 59.5%-ը:

Նախորդ տարվա համեմատ կորպորատիվ պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 60.7%-ով և կազմել է 99.3 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 17.8%-ը: Գրեթե վեց անգամ աճել է բաժնետոմսերով իրականացված գործառնությունների ծավալը (106.3 մլրդ դրամով)՝ կազմելով 126.9 մլրդ դրամ կամ արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 22.7%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի ընդհանուր գործառնություններում բորսայական առուվաճառքի տեսակարար կշիռը կազմել է 13.1%:

2014 թվականին կարգավորվող շուկայում արժեթղթերով իրականացված գործառնությունների ծավալը աճել է ավելի քան երեք անգամ (51.6 մլրդ դրամով) և կազմել 73.3 մլրդ դրամ:

Կարգավորվող շուկայում արժեթղթերով իրականացված ռեպո գործառնությունները կազմել են ընդհանուր շրջանառության 2.9%-ը (նախորդ տարի՝ 7.5%-ը): Ընդ որում, գրեթե բոլոր ռեպո գործառնություններն իրականացվել են կորպորատիվ պարտատոմսերով: Պետական պարտատոմսերով գործառնությունները կազմել են կարգավորվող շուկայի ընդհանուր գործառնությունների 45.0%-ը, կորպորատիվ արժեթղթերով գործառնությունները՝ 16.9%-ը, իսկ բաժնային արժեթղթերով գործառնությունները՝ 38.1%-ը:

31.12.2014 թ. դրությամբ, արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 88.3%-ով և կազմել է 181 մլն դրամ:


31.12.2014 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների արժեթղթերի փաթեթի 87.7%-ը կազմել են ոչ բաժնային արժեթղթերը: Ըստ ձեռք բերված արժեթղթերի կարգավիճակի՝ փաթեթի 71.6%-ը զբաղեցրել են ազատ կարգավիճակով արժեթղթերը, 11.2%-ը՝ հակադարձ ռեպոյով ձեռք բերված արժեթղթերը և 17.1%-ը՝ գրավադրված արժեթղթերը:

ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման մակարդակը կազմել է 73.0 մլրդ դրամ, իսկ կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը[18]՝ 1.6%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.2 տոկոսային կետով:

31.12.2014 թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում վարվել են անվանական արժեթղթերի սեփականատերերի 2190 ռեեստրներ, իսկ ՀԿԴ-ում արժեթղթերի հաշիվ ունեցող արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 105222:

Գրաֆիկ 48.


ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացում և կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 49.

Ներդրումային ծառայություն մատուցող անձանց արժեթղթերի փաթեթի կառուցվածքը 31.12.2014 թ. դրությամբ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[18] *Հաշվետու թողարկողների կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի քանակի և դրանցով կնքված վերջին գործարքի գնի արտադրյալ:*


Տարեվերջին ՀՀ արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 15 հաշվետու թողարկողների թվով 24 դասի/թողարկման արժեթղթեր. ընդ որում՝ թողարկողներից 2-ը թողարկել են ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր: Հաշվետու թողարկողներից 11-ը թողարկել են 12 դասի բաժնետոմսեր, իսկ 6-ը՝ 12 դասի պարտատոմսեր: Թողարկված պարտատոմսերից 5-ը արտարժութային են, որոնց կշիռն ընդհանուր ծավալում կազմել է 42%:

31.12.2014 թ. դրությամբ հաշվետու թողարկողների կողմից թողարկված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 39.0 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ընդհանուր ծավալը՝ 14.6 մլրդ դրամ: Թողարկված պարտքային արժեթղթերի 67.4%-ը բաժին է ընկել 4 ֆինանսական կազմակերպությունների, իսկ 3 ֆինանսական կազմակերպությունների մասնակցությունը բաժնային արժեթղթերում կազմել է 34%:


Գրաֆիկ 50.

Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակը 2014 թ.

Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ



Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2014 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 8 վճարահաշվարկային կազմակերպություններ, այդ թվում՝ 3 ընկերություն ունեն միայն դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա, 4 ընկերություն՝ դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա և վճարային գործիքներ ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա, 1 ընկերություն՝ միայն վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա և 3 ընկերություն՝ էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն:

2014 թ. վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգի և դրամական փոխանցման լիցենզիա ունեցող ընկերությունների ակտիվներն աճել են 34%-ով՝ տարեվերջին կազմելով 4.5 մլրդ դրամ, պարտավորությունները 40%-ով՝ կազմելով 3.0 մլրդ դրամ, իսկ կապիտալը 23%-ով՝ կազմելով 1.5 մլրդ դրամ:

Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների ակտիվները և կապիտալը տարվա ընթացքում ավելացել են համապատասխանաբար 11% և 38%-ով՝ կազմելով 22.2 մլրդ դրամ և 15.8 մլրդ դրամ, իսկ՝ պարտավորությունները նվազել են 24%-ով՝ կազմելով 6.8 մլրդ դրամ:

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգի և դրամական փոխանցման լիցենզիա ունեցող ընկերությունները հաշվետու տարում ապահովել են 894 մլն դրամ շահույթ, իսկ միայն դրամական փոխանցում իրականացնող ընկերությունները՝ 800 մլն դրամ:


Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ 5 վճարահաշվարկային կազմակերպություններ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված մասնաճյուղերի միջոցով իրականացրել են կոմունալ վճարումների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարների ընդունում: Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 15%-ով՝ կազմելով 431.7 մլրդ դրամ:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային ծառայություններ են մատուցել մի շարք առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների: Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/քլիրինգային ծառայություններ են մատուցել մի շարք առևտրային բանկերի, որոնց միջոցով հավաքագրված կոմունալ ծառայությունների դիմաց միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են 6%-ով՝ կազմելով 5.6 մլրդ դրամ (1.7 մլն գործառնություն):

Արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումները կատարվում են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով: 2014 թ. դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարվել է 19.8 մլրդ դրամի փոխանցում (նախորդ տարվա համե-

Գրաֆիկ 51.


Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների ծավալը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 52.

ԱրՔա համակարգի կողմից մատուցված վճարային ծառայությունները քարտերով, էլեկտրոնային փողերով



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

մատ աճել է մոտ 9 անգամ): Միևնույն ժամանակ, նույն կազմակերպությունների կողմից արտասահման կատարվել են 2.1 մլրդ դրամի փոխանցում (2013 թ. համեմատ աճել է 15 անգամ):

Հաշվետու տարվա ընթացքում «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը ապահովել է 1 տրլն 344.9 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների իրականացում (2013 թ. համեմատ ավելացել են 40%-ով): Մասնավորապես, այլ պրոցեսինգային կենտրոնում գրանցված վճարային քարտերով իրականացվել է 66.2 մլրդ դրամ ծավալի գործառնության հավաստագրում (նախորդ տարվա համեմատ ավելացել է 22%-ով): «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնում գրանցված վճարային քարտերով իրականացված գործառնությունների ծավալը «ԱրՔա» համակարգից դուրս գրանցված սպասարկման կետերի միջոցով (այդ թվում՝ նաև արտասահմանում) կազմել է 140.6 մլրդ դրամ (ավելացել է 36%-ով):

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները

2014 թ. վերջի դրությամբ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 19%-ով՝ կազմելով 2.3 մլն հաճախորդ: Այդ աճը գրեթե լիովին պայմանավորվել է ֆիզիկական անձ հաճախորդների քանակի աճով, որն էլ իր հերթին տարեվերջին կազմել է 2.2 մլն: Բանկային համակարգում հաճախորդների հաշիվների քանակն ավելացել է 22%-ով՝ կազմելով 3.9 մլն հաշիվ (այդ թվում՝ 2.8 մլն՝ ընթացիկ հաշիվներ, 165 հազար՝ ժամկետային հաշիվներ, 879 հազար՝ վարկային հաշիվներ):

2014 թ. ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 1 տրլն դրամի 352.6 մլրդ գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 32%-ով և կազմել մոտ 140 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 26.5 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 5.5 մլրդ դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 21.0 մլրդ դրամ): Նախորդ տարվա համեմատ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակն ավելացել է 4.7%-ով և կազմել է 1.6 մլն: Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների (այդ թվում նաև ինտերնետ գործառնությունները) մասնաբաժինն ընդհանուր քարտային գործառնություններում 2013 թվականի համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով 10.4%:

Առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները նախորդ տարվա համեմատ նվազել են 6%-ով և կազմել 884.9 մլրդ դրամ (այդ թվում նաև ՍՎԻՖԹ-ի միջոցով), իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը աճել է 9%-ով և կազմել 364.6 մլրդ դրամ: Արդյունքում՝ զուտ ներհոսքը կազմել է 520.3 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա ցուցանիշը 14%-ով:


ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների միջին օրական ծավալը կազմել է 102.1 մլրդ դրամ (քանակը՝ 71 հազար): Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 43%-ով, իսկ քանակը՝ 36%-ով և կազմել համապատասխանաբար 66.1 մլրդ դրամ և 14 հզ վճարում:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը աճել է 31%-ով՝ կազմելով 43.9 մլրդ դրամ, իսկ քանակը նվազել է 35%-ով՝ կազմելով 14 հազար: Արդյունքում՝ մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը կազմել է մոտ 3.2 մլն դրամ (ավելացել է ավելի քան երկու անգամ):

Էլեկտրոնային վճարումների համակարգով բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումները տարվա ընթացքում աճել են 12%-ով՝ կազմելով 260.4 մլրդ դրամ: Առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալն ավելացել է 7%-ով՝ կազմելով 2.9 մլրդ դրամ:

Գրաֆիկ 53.


Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական փոխանցումները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 54.

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների (առանց բորսայական գործառնությունների) ծավալի կառուցվածքը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2014 թ. վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 22 բանկեր, 2 ներդրումային ընկերություններ, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի կառավարման հիմնադրամը, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան», «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսան, ՀՀ ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի, հաշվետիրոջ և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի հետ կապված):

Գրաֆիկ 55.


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների (առանց բորսայական գործառնությունների) քանակային կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 56.

Տրամադրված վճարային քարտերն ըստ տեխնիկական նկարագրի



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

31.12.2014 թ. դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 19 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ այդ բանկերից բոլորն էլ անդամակցում են «ArCa» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու տարում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 102 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և տարեվերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 1357: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 68 POS-տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 6902 (այդ թվում՝ 726-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում):

2014 թ. վճարային քարտերի քանակը ավելացել է 4.7%-ով՝ կազմելով 1.6 մլն: Գործող «ArCa» քարտերի քանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 3%-ով և կազմել 547 հազար: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 9%-ով, այդ թվում՝ «VISA»-ն՝ 9%-ով և կազմել 712 հազար, իսկ «MasterCard»-ը՝ 7%-ով և կազմել 321 հազար: Միջազգային այլ քարտերի քանակն ավելացել է 23%-ով կազմելով 59 հազար:

Աղյուսակ 17. Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2014 թ.)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ArCa» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	1032454	21121250	290244	6610793
այդ թվում՝ անկանխիկ	5744	514647	496	165137
POS - տերմինալների/ իմպրինտերների միջոցով	293658	3129089	72921	745283
այդ թվում՝ անկանխիկ	107902	2617330	34599	507233
Ինտերնետ միջավայրում	26476	1630380	6465	414917
Ընդամենը	1352587	25880719	369630	7770993
այդ թվում՝ անկանխիկ	140122	192021	41561	1087287

Առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերում «ArCa», «VISA», «MasterCard» քարտերի տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 33%, 43% և 20%, իսկ մնացած 4%-ը կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերը, որոնցում ընդգրկված են նաև «HSBC debit» և «AmEx» քարտերը:


ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը (ներառյալ՝ արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնությունները) ավելացել է 33%-ով՝ կազմելով 1.4 տրլն դրամ, իսկ քանակը՝ 25%-ով և կազմել 26 մլն: Ընդհանուր գործառնությունների ծավալի 27%-ը բաժին է ընկել «ArCa», 47%-ը՝ «VISA», 20%-ը՝ «MasterCard» և 6%-ը՝ այլ քարտերով իրականացված գործառնություններին: Հաշվետու տարում «ArCa» վճարային քարտերով իրականացված գործառնությունների ծավալն աճել է 31%-ով՝ կազմելով 369.6 մլրդ դրամ, իսկ «VISA» և «MasterCard» վճարային քարտերով իրականացված գործառնությունների ծավալներն աճել են համապատասխանաբար 33% և 42%-ով՝ կազմելով համապատասխանաբար 632.4 մլրդ և 264.6 մլրդ դրամ: Միջազգային այլ քարտերով իրականացված գործառնությունների ծավալն աճել է 13%-ով և կազմել 85.9 մլրդ դրամ:

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի կողմից թողարկված VISA քարտերով արտասահմանում կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 24%-ով՝ կազմելով 46.6 մլրդ դրամ (քանակն ավելացել է 47%-ով և կազմել 1.1 մլն), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 22%-ով՝ կազմելով 28.1 մլրդ դրամ (քանակն ավելացել է 51%-ով և կազմել 661 հազար), իսկ միջազգային այլ քարտերով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 21%-ով և կազմել 10.0 մլրդ դրամ:

ՀՀ տարածքում մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալն ավելացել է 8%-ով և կազմել 57 հազար դրամ, իսկ անկանխիկի ծավալը նվազել է 3%-ով և կազմել 29 հազար դրամ:

Գրաֆիկ 57.


Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերն ըստ տեխնիկական նկարագրի



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 58.


ՀՀ բանկերի կողմից վճարային քարտերի տրամադրման շարժը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Գրաֆիկ 59.

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված գործառնությունները 2006 - 2014 թթ.




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Կենտրոնացումը վճարային քարտերի տրամադրման և սպասարկման ոլորտում հաշվետու տարվա ընթացքում ցուցաբերել է նվազման միտում: ԱԳՄ-ներով կանխիկացումների, POS-տերմինալներով գործառնությունների և մագնիսական ժապավենով քարտերի տրամադրման մեջ առաջատար հինգ բանկերին բաժին է ընկնում համակարգի կեսից ավելին: Նվազել են միկրոպրոցեսորային քարտերի տրամադրման և ԱԳՄ-ներով կանխիկացումների քանակի կենտրոնացումները, որտեղ առաջատար երկու բանկերի բաժինը նվազել է համապատասխանաբար 8 և 11 տոկոսային կետով՝ կազմելով համակարգի 46% և 29%-ը:

Գրաֆիկ 60.

ՀՀ տարածքում վճարային քարտերով գործառնություններ իրականացրած և քարտեր տրամադրած առաջատար բանկերի մասնաբաժինը 2013 և 2014 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

31.12.2014 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդներին դրամական փոխանցումների իրականացման ծառայություններ մատուցելու նպատակով անդամակցում են 13 միջազգային և 2 հայաստանյան համակարգերի:


Միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով 2014 թ. Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 678.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 7.1%-ով: Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 184 հազար դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 16%-ով:

Միջազգային փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ նվազել է 10%-ով՝ կազմելով 577.2 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները նվազել են 2.2%-ով և կազմել 206.8 մլրդ դրամ. մեկ վճարման միջինը 2013 թ. համեմատ նվազել է 7%-ով՝ կազմելով 3.6 մլն դրամ: Միաժամանակ, առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներն արտասահման աճել են 6.7%-ով և կազմել 263.6 մլրդ դրամ: Արդյունքում՝ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտվում է դրամական միջոցների զուտ արտահոսք՝ 56.9 մլրդ դրամ ծավալով:

Գրաֆիկ 61.

Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով ֆիզիկական անձանց կողմից արտասահմանից ստացումներ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Նորագույն տեխնոլոգիաներ ներդնելու միջոցով առևտրային բանկերը ընդլայնել և բարելավել են իրենց հաճախորդներին մատուցվող ծառայությունների ցանկը: Մի շարք առևտրային բանկերի կողմից ներդրվել են հեռակառավարվող սպասարկման համակարգեր՝ հնարավորություն տալով իրենց հաճախորդներին իրականացնելու բանկային հաշիվների հեռակառավարում: Հաճախորդները կարող են ներկայացնել հանձնարարականներ, ստանալ տեղեկատվություն բանկային հաշվի մնացորդի վերաբերյալ և իրականացնել այլ բանկային գործառնություններ:

2014 թ. բանկային հեռակառավարվող սպասարկման համակարգերի միջոցով հաճախորդների նախաձեռնած ընդհանուր վճարումներն ավելացել են 48%-ով և կազմել 8.8 տրլն դրամ, իսկ քանակն ավելացել է 34%-ով՝ կազմելով 7.3 մլն: Նշված վճարումները հաճախորդների կողմից իրականացվել են բանկ-հաճախորդ համակարգերով (վճարումների ծավալը կազմել է 4.7 տրլն դրամ), ինտերնետ-բանկինգ ծառայության միջոցով (վճարումների ծավալը կազմել է 3.9 տրլն դրամ), ինչպես նաև հեռախոսային-բանկինգ ծառայության միջոցով (վճարումների ծավալը կազմել է 199.0 մլրդ դրամ): Հաճախորդների կողմից բանկ-հաճախորդ համակարգով և ինտերնետ-բանկինգ ծառայության միջոցով իրականացված մեկ վճարման միջին գումարը կազմել է համապատասխանաբար 0.9 մլն դրամ և 2.0 մլն դրամ, իսկ հեռախոսային բանկինգի միջոցով՝ 2.5 մլն դրամ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության, զարգացման, վճարահաշվարկային համակարգի կատարելագործման քաղաքականության ներքո Կենտրոնական բանկը 2015 թվականին կշարունակի կարգավորման ու վերահսկողության կատարելագործմանն ուղղված բարեփոխումները:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման հեռանկարները

Բանկերում ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով Կենտրոնական բանկը 2014 թվականին շարունակել է Բազել III-ի սկզբունքների ներդրման աշխատանքները, մասնավորապես՝ ԿԲ խորհրդի որոշմամբ սահմանվել են նորմատիվային կապիտալի կազմի և կառուցվածքի նոր չափանիշներ, ինչն ուղղված է ռիսկերի կլանման հիմնական աղբյուր հանդիսացող կապիտալի որակական հատկանիշների բարելավմանը: Աշխատանքներ են տարվել իրացվելիության ռիսկի կառավարման նոր մոտեցումների ներդրման հնարավորությունների գնահատման ուղղությամբ: Բազել III-ի ներդրման աշխատանքները շարունակվելու են նաև 2015 թվականի ընթացքում:

Կենտրոնական բանկը 2015 թվականին ևս կշարունակի աշխատանքները Բազել III-ի սկզբունքների ներդրման ուղղությամբ, ինչի արդյունքում ՀՀ բանկային համակարգի կարգավորման դաշտը առավելագույնս կհամապատասխանեցվի այդ ոլորտի համար կիրառվող միջազգային սկզբունքներին:

Ընթացիկ տարում շարունակվել են աշխատանքները ***ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման ռազմավարության*** մշակման ուղղությամբ, որի նպատակն է ուրվագծել ՀՀ ֆինանսական համակարգի հեռանկարային զարգացման ուղղությունները և առաջարկել անհրաժեշտ միջոցառումներ: Ռազմավարության մշակման նպատակով ներգրավվել են նաև միջազգային փորձագետներ, որոնց օգնությամբ ուսումնասիրվել են իրական հատվածի առաջիկա տարիների զարգացման միտումներն ու ֆինանսական համակարգի դերը տնտեսության սպասարկման գործում:

Շարունակվել են նաև ԱՊՊԱ համակարգի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Մասնավորապես՝ ուժի մեջ է մտել ***Բոնուս-Մալուս համակարգի Մալուս բաղադրիչը,*** որով ռիսկային վարորդների համար սահմանվել են ավելի բարձր ապահովագրավճարներ: 2014 թվականի ընթացքում տարվել են աշխատանքներ նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի կողմից Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության տեղեկատվական-փնտրողական համակարգից ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալների ստացման ուղղությամբ: Վերոնշյալ տվյալների ստացումը կնպաստի ֆիզիկական անձանց ապահովագրական ճշգրիտ պատմության ձևավորմանը և ԱՊՊԱ ռեգիստրի արդյունավետության բարձրացմանը: Իրականացվել են նաև աշխատանքներ ՀՀ ոստիկանության տեղեկատվական-փնտրողական համակարգից ֆինանսական կազմակերպություններին և մի շարք ենթակառուցվածքների ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալների էլեկտրոնային եղանակով տրամադրման ուղղությամբ:

2014 թվականին սկսվել և 2015 թվականին նախատեսվում է ավարտել ***ավտոապահովագրության միասնական պատուհանի (ԱՄՊ)*** ներդրման աշխատանքները: ԱՄՊ-ն եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսե-

րեն) վեբ հարթակ է հանրային կամ մասնավոր մուտքի հասանելիությամբ, որը համակարգի օգտագործողներին հնարավորություն է տալիս ունենալու ԱՊՊԱ պայմանագրերի կնքման, պատահարների և հատուցման կառավարման ողջ գործընթացի համար մեկ ընդհանուր էլեկտրոնային միջավայր: ԱԱՄՊ-ի ներդրման նպատակն է՝ ապահովել ԱՊՊԱ պայմանագրերի առցանց կնքումը, բարելավել ապահովագրական ընկերությունների հատուցումների կառավարման և վնասների գնահատման գործընթացները մեկ միասնական հարթակի միջոցով: ԱԱՄՊ-ի ներդրումն իրականացվում է Բյուրո Վերիտաս կազմակերպության հետ համատեղ, որը միասնական պատուհանի վարման, ինչպես նաև համապատասխանության գնահատման ոլորտում համաշխարհային առաջատար կազմակերպություն է:

2014 թվականին շարունակվել են աշխատանքները նաև ապահովագրության այլ տեսակների զարգացման ուղղությամբ, մասնավորապես՝ ***կյանքի ապահովագրության ներդրման հեռանկարների բացահայտման,*** ինչպես նաև ոլորտի զարգացմանն ուղղված վերլուծական աշխատանքների իրականացման նպատակով: Ի լրումն կյանքի ապահովագրության ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացման, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ 2014 թվականին սկսել են իրականացվել նաև գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքներ, ինչի արդյունքում 2015 թվականին նախատեսվում է բացահայտել համակարգի ներդրման հնարավորությունները և մշակել համակարգի ներդրման հայեցակարգային մոտեցումներ:

2014 թվականին Ֆրանսիական զարգացման գործակալության հետ համագործակցության արդյունքում «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն մեկնարկել է ***բնակարանային էներգաարդյունավետության բարձրացման և միկրովարկերի ֆինանսավորման ծրագիրը:*** 2014 թվականին ընկերությունը շարունակել է կարճաժամկետ կորպորատիվ պարտատոմսերի թողարկումը: Ընթացիկ տարում իրականացվել է մինչև 5 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի թողարկում: Հիփոթեքային շուկայի զարգացման, մասնավորապես հիփոթեքային վարկավորման հասանելիության ընդլայնման նպատակով առաջիկա տարիներին նախատեսվում է մինչև 10 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի, ինչպես նաև հիփոթեքային վարկերով ապահովված պարտատոմսերի թողարկում: Վերջինիս իրականացման նպատակով մշակվում է մոդել՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի և ՀՀ շուկայի առանձնահատկությունների և սահմանափակումների վրա:

Հաշվետու տարում շարունակվել են նաև ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացման ուղղությամբ իրականացվող հատուկ նպատակային ծրագրերը, մասնավորապես՝ շարունակվել է ***«Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան»*** պետական նպատակային սոցիալական ծրագրի գործունեությունը, ինչպես նաև թիրախային այլ խմբերի համար նախատեսված սոցիալական ծրագրերի գծով տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը: Վերջին եռամսյակում մեկնարկել է ***«Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագիրը»,*** որի շրջանակներում, համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման, նախատեսվում է տրամադրել հիփոթեքային վարկեր պետական ծառայողներին՝ կառուցվող բազմաբնակարանային շենքային համալիրից բնակարանի ձեռքբերման նպատակով: Նշված ծրագրերն ունեն շարունակական բնույթ, և առաջիկա տարիներին նախատեսվում է իրագործել նմանատիպ այլ ծրագրեր:

Սոցիալական ծրագրերի շրջանակներում 2014 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը շարունակել է աջակցություն ցուցաբերել 2013 թվականին մեկնարկած ուսանողներին տրամադրվող ուսումնական վար-

կերի, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր, սպայական անձնակազմին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով տրամադրվող սպառողական վարկերի ուղղությամբ (սուբսիդավորմամբ սոցիալական ծրագրեր):

2015 թվականին Կենտրոնական բանկն ակտիվորեն կշարունակի արժեթղթերի շուկայի մասնակիցների, կուտակային կենսաթոշակային համակարգում ներգրավված ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ֆոնդերի գործունեության կարգավորման դաշտի կատարելագործման աշխատանքները, մասնավորապես՝ այս ոլորտում առկա առաջադեմ ստանդարտների՝ Արժեթղթերի վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IOSCO) և Կենսաթոշակային վերահսկողների միջազգային կազմակերպության (IOPS) կողմից սահմանված վերահսկողական սկզբունքների և չափանիշների ներդրման միջոցով:

2015 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի ենթակառուցվածքի ծրագրային և տեխնիկական համակարգի ներդրման համար կնքված պայմանագրից բխող աշխատանքների իրականացումը, մասնակիցների կենսաթոշակային հաշիվների բացման և վարման կենտրոնացված համակարգի մշակումը: Նշված համակարգը հնարավորություն կտա կենտրոնացված կարգով և համեմատաբար ավելի փոքր սպասարկման վճարի դիմաց վարելու մասնակիցների ռեեստրը, իրականացնելու կենսաթոշակային ֆոնդերի ադմինիստրավորում (կուտակային վճարների հաշվին փայերի թողարկում, փայերի փոխանակում, միանվագ վճարների, ծրագրային վճարների կազմակերպում և այլն), սպասարկելու ֆոնդերի կառավարիչներին ֆոնդերի կառավարման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև ֆոնդերի մասնակիցներին իրենց կենսաթոշակային հաշիվներին էլեկտրոնային մուտքի ապահովման և այլ տեղեկատվության տրամադրման հարցում:

2015 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ կիրականացվեն արժեթղթերի շուկայի նոր որակյալ գործիքների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես կիրականացվեն կոլեկտիվ ներդրումային սխեմաների ընդլայնմանն ու օտարերկրյա ներդրողների համար առավել գրավիչ դարձնելուն ուղղված աշխատանքներ, ՀՀ տարածքում գործող խոշոր հեղինակավոր ընկերությունների կողմից բաժնետոմսերի և պարտատոմսերի նոր թողարկումները խթանելու և դրանց աջակցելու ուղղությամբ միջոցառումներ, ինչպես նաև արժեթղթավորման ինստիտուտների ստեղծման և արժեթղթավորման պրոյեկտների իրականացման խթանման գործընթացներ: Նշված աշխատանքները հնարավորություն կտան ունենալ ֆինանսական նոր հաստատություններ, ենթակառույցներ, գործիքներ և ծառայություններ, որոնք էլ, իրենց հերթին, կհանգեցնեն ֆինանսական միջնորդության առավել բարձր մակարդակի: Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով 2015 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից կշարունակվեն արժեթղթերի շուկայի ենթակառուցվածքի շարունակական կատարելագործման, արժեթղթերով առևտրի և հաշվարկների լավագույն ստանդարտների և պրակտիկայի ներդրման աշխատանքները:

ՀՀ ֆինանսական համակարգի վերահսկողության և սպառողների շահերի պաշտպանության զարգացման հեռանկարները

Հաշվետու տարում Կենտրոնական բանկը Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Ֆինանսների նախարարության ներգրավմամբ իրականացրել է ֆինանսական ճգնաժամերի վերաբերյալ սիմուլյացիոն վարժանք: Այն նպատակ ունի բացահայտելու ֆինանսական ճգնաժամերի կառավարման

գործընթացներում հնարավոր հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև բարձրացնելու ճգնաժամային իրավիճակներում մասնակիցների կողմից որոշումներ կայացնելու պատրաստվածության մակարդակը: Հետագա տարիներին ևս նախատեսվում է անցկացնել տարբեր ձևաչափերով սիմուլյացիոն խաղեր, որոնք ուղղված կլինեն ֆինանսական համակարգի կայունությունը խոցող հավանական ռիսկերի բացահայտման և ճգնաժամերի հանգուցալուծման սցենարների մշակմանը:

2015 թվականին իրականացվելու են ավարտական աշխատանքներ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության վերջնական ներդրման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա սահմանափակ ռեսուրսների օպտիմալ բաշխման միջոցով բարձրացնելու ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության արդյունավետության մակարդակը:

2015 թվականին շարունակական են լինելու սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված ծրագրերը. կատարելագործվելու են գործարար վարվելակերպին ուղղված կարգավորման և վերահսկողական միջոցառումները, շարունակվելու են նաև հանրության իրազեկմանն ուղղված աշխատանքները:

«Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքների փոփոխությունների նախագծերը Ազգային ժողովի կողմից ընդունումից հետո Կենտրոնական բանկին հնարավորություն կընձեռվի սահմանել բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների գործարար վարվելակերպին ուղղված միասնական և ամբողջական սկզբունքներ և պահանջներ:

Գործարար վարվելակերպի վերահսկողության ձեռնարկների համաձայն՝ 2015 թվականից վարվելու է հստակ վիճակագրություն քաղաքացիների կողմից Կենտրոնական բանկ ուղղված գրավոր և բանավոր (այդ թվում՝ թեժ գծի միջոցով) դիմումների և դրանց հիման վրա իրականացված միջոցառումների վերաբերյալ: 2014 թվականին հաստատված «Ստուգիչ գործարքների» ձեռնարկով սահմանված կարգով 2015 թվականին իրականացվելու է նաև ֆինանսական շուկայի ուսումնասիրություններ, մասնավորապես՝ դիտարկվելու են հաճախորդների սպասարկման գործընթացները տարբեր ֆինանսական կազմակերպություններում:

Հանրության իրազեկման ուղղությամբ 2015 թվականին շարունակվելու են նախորդ տարիների աշխատանքները, ինչպես նաև իրականացվելու են «Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կրթման ազգային ռազմավարությամբ» սահմանված միջոցառումները:

2015 թվականին Կենտրոնական բանկը կիրականացնի Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (IOSCO) «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ բազմակողմ համաձայնության հուշագրին» միանալու հետ կապված ամփոփիչ աշխատանքները: Հուշագրին միանալու արդյունքում Կենտրոնական բանկը լծակ կունենա հուշագիրը ստորագրած՝ արժեթղթերի շուկան կարգավորող մարմիններից հնարավորինս լիակատար աջակցություն, այդ թվում՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ, որը կնպաստի Կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի շուկայի մասնակիցների նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը: Ավելին՝ հաշվի առնելով, որ հուշագրին միացումը հնարավոր է միայն IOSCO-ի արժեթղթերի շուկայի կարգավորման սկզբունքներին համապատասխանության բարձր աստիճանի դեպքում, ապա հուշագրին միացումը միջազգային ասպարեզում կփաստի ՀՀ արժեթղթերի շուկայի թափանցիկության և կարգավորման բարձր մակարդակի մասին:

Հավելված 1. ՀՀ տարածքում գործող բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

Ակտիվներ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Արժույթ	31.12.11	31.12.12[1]	31.12.13[1]	Փոփոխությունը 31.12.13-31.12.12	31.03.14[1]	Փոփոխությունը 31.03.14-31.12.13	30.06.14[1]	Փոփոխությունը 30.06.14-31.03.14
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	49186976	55804033	61942108	11.0%	53367238	-13.8%	54926880	2.9%
	Ա	39977271	43236865	48063349	11.2%	51708807	7.6%	49309612	-4.6%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	163077744	179468343	223349685	24.5%	182261515	-18.4%	171439000	-5.9%
	Ա	110207257	85508263	238814033	179.3%	209461592	-12.3%	133776294	-36.1%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	32552193	17783838	18901750	6.3%	27069948	43.2%	32915313	21.6%
	Ա	116484718	147226432	149589222	1.6%	156434455	4.6%	169741425	8.5%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	19217784	23393825	32306847	38.1%	32943619	2.0%	33284292	1.0%
	Ա	8949708	11605097	9065648	-21.9%	10879015	20.0%	12466510	14.6%
Պետական արժեթղթեր		167502233	181248427	225674419	24.5%	221973955	-1.6%	223793825	0.8%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	13118412	13350485	14879345	11.5%	16632692	11.8%	15920692	-4.3%
	Ա	11059651	3561	361907	10063.1%	3653	-99.0%	4131	13.1%
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	150968994	153960455	181757349	18.1%	163659340	-10.0%	166823018	1.9%
	Ա	575572682	778448408	819290251	5.2%	833001517	1.7%	851891130	2.3%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	281892775	353173803	418961966	18.6%	438474299	4.7%	455752020	3.9%
	Ա	142933367	186904734	219877460	17.6%	229664396	4.5%	238059617	3.7%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	18318595	21312122	20436487	-4.1%	21735370	6.4%	20914409	-3.8%
	Ա	40808182	42537512	48557139	14.2%	51590764	6.2%	52844830	2.4%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-26088877	-34530972	-42985763	24.5%	-46514209	8.2%	-50474723	8.5%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	Դ	8319695	8197772	11032398	34.6%	13529152	22.6%	14557880	7.6%
	Ա	7786886	19629901	23623843	20.3%	27882433	18.0%	29710758	6.6%
Հիմնական միջոցներ		71873609	80130403	83328760	4.0%	84018198	0.8%	83934008	-0.1%
Այլ արժեթղթեր	Դ	4906770	5450458	13776072	152.8%	17029098	23.6%	19003187	11.6%
	Ա	53195	230685	3286275	1324.6%	3701302	12.6%	3573763	-3.4%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)	Դ	14169433	8318066	10736554	29.1%	11345214	5.7%	13879281	22.3%
	Ա	9654628	3902863	7580015	94.2%	7654118	1.0%	7003996	-8.5%
Այլ ակտիվներ		34218880	91530634	101527272	10.9%	106660398	5.1%	118026174	10.7%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**1560472467**	**2066722761**	**2943734392**	**42.4%**	**2926167878**	**-0.6%**	**2923077322**	**-0.1%**

Ցուցանիշներ	Արժույթ	30.09.14[1]	Փոփոխությունը 30.09.14-30.06.14	31.12.14[1]	Փոփոխությունը 31.12.14-30.09.14	Փոփոխությունը 31.12.14-31.12.13	
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	55437148	0.9%	63129297	13.9%	1187190	1.9%
	Ա	50037282	1.5%	50156380	0.2%	2093031	4.4%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	177085420	3.3%	334324590	88.8%	110974905	49.7%
	Ա	120980928	-9.6%	135944281	12.4%	-102869753	-43.1%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	48847570	48.4%	2827424	-94.2%	-16074326	-85.0%
	Ա	145025148	-14.6%	179414351	23.7%	29825128	19.9%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	33394774	0.3%	26773547	-19.8%	-5533300	-17.1%
	Ա	8906592	-28.6%	14718317	65.3%	5652669	62.4%
Պետական արժեթղթեր		228339869	2.0%	238875710	4.6%	13201291	5.8%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	16681958	4.8%	15222444	-8.7%	343099	2.3%
	Ա	3478	-15.8%	8566	146.3%	-353341	-97.6%
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	180314917	8.1%	179594561	-0.4%	-2162788	-1.2%
	Ա	860290678	1.0%	1043240653	21.3%	223950403	27.3%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	460103939	1.0%	474835742	3.2%	55873776	13.3%
	Ա	243729219	2.4%	296696349	21.7%	76818889	34.9%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	21928249	4.8%	22316703	1.8%	1880216	9.2%
	Ա	54517843	3.2%	56743268	4.1%	8186129	16.9%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-56295032	11.5%	-66765866	18.6%	-23780103	55.3%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	Դ	14621507	0.4%	13219065	-9.6%	2186668	19.8%
	Ա	32060127	7.9%	39136645	22.1%	15512801	65.7%
Հիմնական միջոցներ		83686531	-0.3%	88068668	5.2%	4739908	5.7%
Այլ արժեթղթեր	Դ	19073981	0.4%	23097052	21.1%	9320980	67.7%
	Ա	2734664	-23.5%	2171328	-20.6%	-1114948	-33.9%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)	Դ	14786748	6.5%	14136326	-4.4%	3399772	31.7%
	Ա	8314755	18.7%	12900283	55.1%	5320268	70.2%
Այլ ակտիվներ		134499080	14.0%	150137056	11.6%	48609783	47.9%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**2959107371**	**1.2%**	**3410922738**	**15.3%**	**467188346**	**15.9%**

Հավելված 1. *(շարունակություն)*

Պարտավորություններ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ		Արժույթ	31.12.11	31.12.12[1]	31.12.13[1]	Փոփոխությունը 31.12.13-31.12.12	31.03.14[1]	Փոփոխությունը 31.03.14-31.12.13	30.06.14[1]	Փոփոխությունը 30.06.14-31.03.14
Բանկերի թղթակցային հաշիվները		Դ	1738927	2922585	1369146	-53.2%	1152512	-15.8%	2658053	130.6%
		Ա	6926903	4369337	9034957	106.8%	4889749	-45.9%	6240710	27.6%
Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ՝ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		Դ	206196946	249961443	309201582	23.7%	265214407	-14.2%	285966235	7.8%
		Ա	399768255	492412214	446330699	-9.4%	438346073	-1.8%	430136530	-1.9%
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	107808701	95693645	117352041	22.6%	109496838	-6.7%	113724062	3.9%
		Ա	138506666	106585451	233992849	119.5%	242415233	3.6%	205635658	-15.2%
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ		Դ	54285133	65659334	80700124	22.9%	69650575	-13.7%	79168800	13.7%
		Ա	75159889	87660435	90092068	2.8%	98217743	9.0%	109195554	11.2%
Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ		Դ	35178714	31988981	48618069	52.0%	57259617	17.8%	48908345	-14.6%
		Ա	93763788	153791344	208802452	35.8%	210187612	0.7%	196711556	-6.4%
Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ		Դ	95163543	143423553	194810556	35.8%	200922358	3.1%	215167536	7.1%
		Ա	334353985	447644009	546886730	22.2%	570096471	4.2%	569022460	-0.2%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ		Դ	71419471	58306016	52850527	-9.4%	51958740	-1.7%	54098893	4.1%
		Ա	10509120	9703040	6595958	-32.0%	6283403	-4.7%	6038995	-3.9%
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ		Դ	5079483	7425843	10136406	36.5%	10902517	7.6%	11765734	7.9%
		Ա	10669306	15327712	14951471	-2.5%	15541987	3.9%	15781681	1.5%
Այլ պարտավորություններ		Դ	50209132	72861914	82055916	12.6%	73229763	-10.8%	55566246	-24.1%
		Ա	14058832	31372442	33920318	8.1%	34363959	1.3%	44152096	28.5%
Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ			**1710796794**	**2077109299**	**2487701871**	**19.8%**	**2460129556**	**-1.1%**	**2449939144**	**-0.4%**
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			233945230	251626537	263029751	4.5%	270029749	2.7%	282843118	4.7%
Գլխավոր պահուստ			18642380	20033433	22655318	13.1%	22696234	0.2%	26866518	18.4%
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր					0		0		0	
Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամանակաշրջանի		31424467	42727017	37928881	-11.2%	7781218	-79.5%	18509468	137.9%
	Նախորդ ժամանակաշրջանի		53950173	65913197	98209091	49.0%	134813891	37.3%	114637141	-15.0%
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			**355925967**	**400716716**	**456032521**	**13.8%**	**466038323**	**2.2%**	**473138178**	**1.5%**
Ստացված գրավ			2744589328	3351892668	3825638311	14.1%	3858975004	0.9%	4053148838	5.0%
